ՍԻՄԵՈՆ ՊՂՆՁԱՀԱՆԵՑՈՒ ԵԿԵՂԵՑԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ԳԵՎՈՐԳ ՂԱԶԱՐՅԱՆ
աստվածաբանության դոկտոր
Աթենքի ազգային համալսարան
gkazaryan@uoa.com

ՀՏԴ՝ 23/28; 75.046; 747-75.
DOI: 10.54503/1829-4278.2025.1-128

Ամփոփագիր

Հոդվածը նվիրված է 13-րդ դ. թարգմանիչ, Պղնձահանքի Սբ Աստվածածին վանքի միաբան Սիմեոն աբեղայի եկեղեցաբանական հայացքներին: Նախ, ցույց է տրվում, որ Սիմեոնի գրչին է պատկանում «Պատասխանիք առ Հայս» թարգմանական երկի երրորդ՝ հայ թարգմանչի ինքնուրույն մասը: Ապա, աղբյուրագիտական և աստվածաբանական քննության են առնվում այդ հատվածի եկեղեցաբանական գաղափարները: Սիմեոն Պղնձահանեցու հայացքները Տիեզերական Եկեղեցու կառավարման հնգապետական համակարգի (պենտարխիայի), Գրիգոր Լուսավորչի կերպարի, Եկեղեցու ներքին՝ խորհրդավոր բնույթի ու արտաքին կառույցի վերաբերյալ արժեքավոր մտքերը թույլ են տալիս նորովի բացահայտելու և ավելի խորն ըմբռնելու միջնադարյան ուղղափառ (օրթոդոքս) հայերի թողած գեղարվեստական ու ճարտարապետական հուշարձանների, այդ թվում՝ Պղնձահանքի (Ախթալայի) վանքի մի շարք յուրահատկություններ:

Բանալի բառեր. Սիմեոն Պղնձահանեցի, Իվանե Զաքարյան-Երկայնաբազուկ, եկեղեցաբանություն, Պղնձահանք, Ախթալա, որմնանկարչություն, Գրիգոր Լուսավորիչ, ուղղափառ հայեր, Դիոնիսիոս Արիսպագացի, Մաքսիմոս Խոստովանող, Եվստաթեոս Թեսաղոնիկեցի

2011 թ. պրոֆ. Պարույր Մուրադյանը, ի շարս դավանաբանական այլ հուշարձանների, հրապարակեց «Պատասխանիք առ Հայս» երկի քննական բնագիրը, որը բաղկացած է երեք հատվածներից: Դրանցից առաջին երկու մասերը թարգմանական բնույթի են, մինչդեռ երրորդ մասն անանուն հայ թարգմանչի ինքնուրույն գործ է[1]: Հրատարակիչը հղում է

[1] **Մուրադյան Պ.**, *ԺԱ-ԺԳ. դարերի հայ-վրացական դավանական խնդիրները և Մխիթար Գոշի «Առ Վրացիսն» թուղթը. աղբյուրագիտական քննություն և բնագրեր,* Ս. Էջմիածին, Մայր Աթոռ Սբ Էջմիածնի հրատ., 2011, էջ 77-170:

կատարում Ի. Աբուլաձեին, որի կարծիքով՝ երկի հեղինակն ամենայն հավանականությամբ Սիմեոն Պղնձահանեցին է: Ինքը՝ Պ. Մուրադյանը, սակայն, կարծես թե համամիտ չէ դրան և հակված է երկը թվագրելու 12-րդ դ. առաջին տասնամյակներով[2]: Այդ թվագրման կռվանն այն է, որ երկում հիշատակվում է «Մաթիոսիկ պատմողը»՝ Մատթեոս Ուռհայեցին: Վերջինս հավանաբար մահացել է 1138-1144 թթ. միջև, հետևապես, նրա «Ժամանակագրութեան» հրապարակումը տեղի է ունեցել նշված թվականներից հետո[3]: Հետևաբար, մեզ հետաքրքրող դավանաբանական երկի թվագրումն էլ պետք է բարձրացվի առնվազն 12-րդ դ. երկրորդ կեսը:

Ավելին, երկում կա մի ուշագրավ մանրամասնություն, որը, մեր կարծիքով, որոշիչ դեր կարող է խաղալ ավելի ճշգրիտ թվագրման համար: Ինչպես կտեսնենք, հեղինակը, թվարկելով հինգ պատրիարքությունները, համառորեն խուսափում է Կոստանդնուպոլսի հիշատակությունից՝ Հռոմոց կայսրության մայրաքաղաքը փոխարինելով Եփեսոսով, և այն էլ՝ ամենավերջին տեղում: Հաշվի առնելով այն, որ արևելյան քրիստոնեության համար Կոստանդնուպոլսի աթոռի դերը բացառիկ էր ոչ միայն պատմական հեղինակության, այլև կանոնական իրավունքի ուժով, նման լռությունը բնավ չի կարելի պատահականություն համարել: Ինչո՞վ է, ուրեմն, պայմանավորված այդ տարօրինակ լռությունը: Ըստ մեզ՝ պատասխանն ակնհայտ է. 1204 թ. Կոստանդնուպոլիսը զավթեցին խաչակրաց չորրորդ արշավանքի մասնակիցները, որի արդյունքում այնտեղ հաստատվեց լատին պատրիարքություն, իսկ հույն ուղղափառ պատրիարքն ու թուլացած արքունիքը ապաստան գտան Նիկիայում ընդհուպ մինչև 1261 թվականը: Ուստի կարելի է ենթադրել, որ ահա հենց այս ժամանակահատվածում է գրվել «Պատասխանիք առ Հայս» երկի երրորդ մասը: Եվ այս ժամանակահատվածը Սիմեոն Պղնձահանեցու թարգմանչական գործունեության տարիներն են, որոնք, իրենց հերթին, ներգծված են հայոց ու վրաց հողերի մշակութային զարթոնքի ժամանակաշրջանի մեջ:

Սիմեոն Պղնձահանեցու մասին պահպանված կցկտուր տեղեկությունները թույլ են տալիս թեկուզ աղոտ, բայց պատկերացում կազմելու նրա կենսագրության մասին[4]: Նրա կյանքի տարիներն են մոտավորապես 1188-1255 թթ.: Եղել է Պղնձահանքի Սբ Աստվածածին վանքի միաբան, ունեցել է քահանայական աստիճան: Ողջ կյանքում զբաղվել է աստվածաբանական ու փիլիսոփայական գրականության թարգմանությամբ: Այսպես, 1227 թ. Սիմեոնն ընդօրինակել է մի ժողվածու, որտեղ

[2] Նույն տեղում, էջ 59, 76, 174-175:

[3] **Մատթեոս Ուռհայեցի**, *Ժամանակագրություն* (թարգմ., ներած. և ծանոթագ.՝ Հ. Բարթիկյանի), Երևան, «Հայաստան» հրատ., 1973, III, XII:

[4] Սիմեոնի կյանքի և գործունեության առաջին ու համապարփակ ուսումնասիրությունը պատկանում է Ներսես Ակինյանի բեղուն գրչին. տե՛ս **Ակինեան Ներսէս վրդ.**, *Սիմէոն Պղնձահանեցի եւ իւր թարգմանութիւնները վրացերէնէ*, Վիեննա, Մխիթ. տպ., 1951:

ամփոփված են Գրիգոր Նյուսացու «Մեկնութիւն Ժողովողին», «Մեկնութիւն Երգոց Երգոյն», «Խօսք յինն Երանութիւնսն», «Յաղագս Կուսութեան», Նեմեսիոս Եմեսացու «Յաղագս բնութեան մարդոյ» երկերը: Սիմեոն Պղնձահանեցին վրացերենից հայերենի է թարգմանել այլաբնույթ երկեր. Պրոկլ Դիադոքոսի «Շաղկապք աստուածաբանականք»-ը, Հովհան Դամասկացու կոթողային «Աղբիւր գիտութեան» առաջին՝ «Դիալեկտիկա» և երրորդ՝ «Աւանդութիւն ուղղափառ հաւատոյ» մասերը: Սիմեոնը թարգմանել է նաև Հովհան Սինայեցու «Սանդուխք»-ի վերջին 10 գլուխները: Պրոկլ Դիադոքոսի երկի հիշատակարանում Սիմեոնը գրել է. «Թարքմանեցաւ գիրքս... ձեռամբ Սիմէօնի անպիտան քահանայ կրօնաւորի ի վրաց լեզուէ ի հայ լեզուս. յերկիրս Հայոց՝ ի վանս Վրաց որ կոչի Պղնձահանք... Աղաչեմ զձեզ, ով եղբարք, զի յոյժ աշխատութեամբ թարքմանեցի ... զի յոյժ ծերացեալ էի եւ տկարացեալ յաչաց եւ ի մտաց եւ ի զօրութենէ. զի զԿ. (60) ամենիւք էի: Այլ զի ոչ էր սա թարքմանեալ ի մեր լեզու ...եւ ես յայն սակս թարքմանեցի, զի մի՛ պակաս եղիցի սա յազգէս մերմէ»[5]: Այս երկերին, փաստորեն, կարելի է գումարել «Պատասխանիք առ Հայս» վրացերենից թարգմանված գործը, որի թարգմանիչը Սիմեոնն է, իսկ կցված երրորդ մասը նրա ինքնուրույն աստվածաբանությունն է:

Սիմեոնի քննվող գործն իր ժամանակի համար օրինաչափ մի ստեղծագործություն է. այստեղ շոշափվում են դավանաբանական ու ծիսական այն տարբերությունները, որոնք կային Հայ Առաքելական և Ուղղափառ Եկեղեցիների միջև: Սիմեոնի այս աշխատանքը պետք է նախևառաջ աղբյուրագիտական և ապա պատմա-աստվածաբանական ուսումնասիրության ենթարկվի, ինչը հետագայի անելիք է: Այս հոդվածով հարկ ենք համարում քննել Սիմեոնի եկեղեցաբանական հայացքները, որոնք բացառիկ են մեր հայրենական աստվածաբանական ժառանգության համար և, բացի դրանից, էական են թե՛ Զաքարյանների ազգային-եկեղեցական քաղաքականությունն ըմբռնելու, թե՛ նրանց ժամանակաշրջանի ուղղափառ հայոց կոթողների որոշ առանձնահատկություններ վերծանելու համար:

Հնգապետության Սիմեոնյան ընկալումը

325-451 թթ. Ա-Դ Տիեզերաժողովների կանոնական որոշումների արդյունքում ձևավորվեց ու վավերացվեց Տիեզերական եկեղեցու «քարտեզը», համաձայն որի՝ աշխարհասփյուռ քրիստոնեությունն ունեցավ

[5] *Մայր Յուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի* (կազմ.՝ Ա. Քեօշկերեան, Կ. Սուքիասեան, Յ. Քեօսէեան, խմբ.՝ Փ Անթաբեան, Յ. Քեօսէեան, Ա. Ղազարոսեան, Տ. Շահէ քհյ. Հայրապետեան), հ. Դ, «Նաիրի»-ԵՊՀ հրատ., Երևան, 2008, էջ 1456: Սիմեոնի հիշատակարանի մեջ առկա ազգային բաղադրիչի մասին տե՛ս **Բոզոյան Ա.**, Ազգային ինքնության արտացոլումը Սիմեոն Պղնձահանեցու մատենագրական ժառանգության մեջ, *Բանբեր հայագիտության*, 2023 (31), էջ 16-27:

հինգ կենտրոններ՝ Ավագ և Նոր Հռոմները[6], Ալեքսանդրիան, Անտիոքն ու Երուսաղեմը: Այս կենտրոնների եպիսկոպոսապետերն ստացան «պատրիարք» տիտղոսը և նրանց ներկայությունն ու համաձայնությունը պարտադիր համարվեց Տիեզերաժողովներում[7]:

Սիմեոն Պղնձահանեցու եկեղեցաբանական խորհրդածությունների մեջ կենտրոնական նշանակություն ունի հնգապետական համակարգը. այստեղ նա հենվում է 11-րդ դ. բյուզանդացի հեղինակ Նիկետաս Ստիթատոսի[8] «Ընդդէմ Հայոց» երրորդ ճառի վրա[9]: Նկատելի է, սակայն, որ հայ հեղինակը սոսկաբար չի պատճենում Նիկետասին, այլ վերջինիս շոշափած թեմաներն ավելի շատ օգտագործում է որպես հենք՝ իր սեփական մտքերը շարադրելու համար, այլով բանիվ՝ ստեղծագործաբար է մոտենում իր աղբյուրներին:

Ըստ Սիմեոնի՝ Հոգեգալստից հետո առաքյալները Քրիստոսի կողմից կարգվեցին համայն աշխարհի իշխաններ, իսկ Պետրոսը, քանի որ Քրիստոսին խոստովանեց Աստծո Որդի, ստացավ Երկնքի արքայության բանալիները, դարձավ Եկեղեցու հիմքն ու հաստատությունը և, այսպիսով, «սա՛ ձեռնադրեցաւ ի Քրիստոսէ առաջին եպիսկոպոս ի վերայ ամենայն երկրի»[10]: Ապա Սիմեոնը պատմում է մի առաքելական ժողովի մասին, որն իբր թե տեղի է ունեցել Անտիոքում[11]: Ահա այս ժո-

---

[6] Կոստանդինոս (Կոստանդիանոս) Ա Մեծ կայսրը (306–337 թթ.), վերաշինելով հնամենի Բյուզանդիոն քաղաքը, 330 թ. այն վերանվանեց «Նոր Հռոմ» և հռչակեց Հռոմեական կայսրության նոր մայրաքաղաք: Հետագայում այն ավելի հայտնի դարձավ որպես «Կոստանդինոսի քաղաք» (Κωνσταντίνου Πόλις), և այսպես ամրագրվեց «Կոստանդնուպոլիս» անվանումը:

[7] Հնգապետության մասին բյուզանդացի մատենագիրների տեսությունների համառոտ վերլուծությունը՝ հարակից մատենագիտությամբ տե՛ս **Дионисий (Шлёнов), игум., Рапава М. А.**, Прп. Никита Стифат: Второе и третье обличительные слова против армян, *Богословский Вестник*, № 10, 2010, с. 37–44:

[8] Հայտնի մատենագիր: Եղել է վանական՝ աշակերտելով նշանավոր Սիմեոն Նոր Աստվածաբանին: Աչքի է ընկել բեղուն գրչով: Նիկետասի գրական ժառանգության մեջ առանձնահատուկ են «ընդդէմ Հայոց» հինգ ճառերը, որտեղ հեղինակը, շատ անգամ չափազանցությունների մեջ ընկնելով, քննադատել է Հայ եկեղեցու դավանական ու ծիսական առանձնահատկությունները: Այս ճառերը Արսեն Իկալտոյեցին թարգմանել է վրացերեն՝ ընդգրկելով իր «Ոգմատիկոն» ժողովածուի մեջ, որից էլ օգտվել է Պղնձահանեցին: Նիկետասի մասին տե՛ս **Бармин А. В.**, Никита Стифат, *Православная энциклопедия*, т. 49, Москва: Церковно-научный центр «ПЭ», 2018, с. 570–577:

[9] Նիկետասի «Ընդդէմ Հայոց» առաջին, երկրորդ և երրորդ ճառերը՝ հունարեն բնագրով, միջնադարյան վրացերեն և արդի ռուսերեն թարգմանությամբ և ուսումնասիրությամբ հանդերձ տե՛ս **Дионисий (Шлёнов), игум., Рапава М. А.**, Прп. Никита Стифат: Первое обличительное слово против армян, *Богословский Вестник*, № 7, 2008, с. 39–104. **Дионисий (Шлёнов), игум., Рапава М. А.**, Прп. Никита Стифат: Второе и третье..., 2010, с. 32–124:

[10] **Մուրադյան Պ.**, *ԺԱ-ԺԳ. դարերի հայ-վրացական...*, էջ 105:

[11] Այս տեղեկության սկզբնաղբյուրը 4-րդ դարի «Սահմանադրութիւն առաքելական» (Αποστολικαὶ Διαταγαί) երկն է, որից օգտվել է Նիկետաս Ստիթատոսը (տե՛ս **Дионисий (Шлёнов), игум., Рапава М. А.**, Второе и третье..., с. 112):

ղովին է, որ առաքյալները «կոչեցին զամենայն որ ի Քրիստոս հաւատացեալն էին քրիստոնեայս», ամենակարևորը՝ հաստատեցին Կղեմեսի գրած 85 կանոններն ու եկեղեցական բոլոր արարողությունները՝ Պատարագը, Մկրտությունը, Ձեռնադրությունը, Մյուռոնօրհնեքը ևն: Ապա առաքյալները ձեռնադրեցին առաջին եպիսկոպոսներին: Հաշվի առնելով նյութի կարևորությունը՝ մեջբերենք մեզ հետաքրքրող հատվածն ամբողջությամբ. «Եւ ապա ձեռնադրեցին եպիսկոպոս յաշակերտացն՝ առաքել յամենայն աշխարհն. եւ առաջին եպիսկոպոս յառաջին եկեղեցին ամենայն աշխարհի, որ է Երուսաղէմ, Տէրն ինքն ձեռնադրեաց զՅակոբոս եղբայր իւր, երկրորդ՝ Պետրոս ձեռնադրեաց զԵւոստոս յերկրորդ համաշխարհական եկեղեցի Անտիոքայ, երրորդ՝ Պօղոս ձեռնադրեաց զԼինոն եպիսկոպոս ի Կլօդիայ ի համաշխարհական եկեղեցին Հռոմայ, չորրորդ՝ զՄարկոս ձեռնադրեաց Պետրոս ի մեծ եկեղեցին Աղէքսանդրիոյ, եւ Մարկոս ձեռնադրեաց զԱնիանոս: Հինգերորդ՝ ի համասփիւռ եկեղեցին Եփեսացւոց զՈնէսիմէ ձեռնադրեաց Անդրէաս: Եւ սոքա ընդ ամենայն աշխարհս իւրաքանչիւր քաղաքի եւ գաւառի ձեռնադրեալ եպիսկոպոս, մեռոնիւ առաքեցին ընդ ամենայն աշխարհս՝ Ոստոս ընդ արեւելս մինչեւ իսպառ, Լեւոն ընդ արեւմուտս մինչեւ իսպառ, Անանիոս՝ ընդ հարաւ եւ ի Հնդիկս, Ոնէսիմէ՝ ընդ հիւսիս ի բուն, որով ի Հայս եւ յԱսորիս կարգեցին եպիսկոպոս՝ ի Սեւաստիա, ի Մելտինիաս, ի Սամուսատ եւ ի Կամախ, ի Կելծինիայ[12], յԵդեսիայ, ի Սելեւկիայ եւ ի Տարսուս»[13]:

Սույն մեջբերումը Նիկետաս Ստիթատոսի համապատասխան հատվածի հետ համեմատելով՝ անմիջապես նկատում ենք, որ Սիմեոնն ունի կարևոր տարբերություններ.

ա. Պետրոս առաքյալը համարվում է գահերեց եպիսկոպոս: Այստեղ Սիմեոնն օգտվում է Երուսաղեմի Թովմաս պատրիարքի (807–821 թթ.)՝ Հայաստան ուղղված թղթից[14]:

բ. Ըստ Պոնձահանեցու՝ Մարկոսին ձեռնադրել է Պետրոս առաքյալը, մինչդեռ Նիկետասը չգիտե դրա մասին:

գ. Եթե Նիկետասը գրում է, որ Անդրեաս առաքյալը Ոնեսիմոսին ձեռնադրել է Բյուզանդիոնի եպիսկոպոս, ապա Սիմեոնը Բյուզանդիոնի փոխարեն մատնանշում է Եփեսոսը:

դ. Ամենակարևորը, եթե Ստիթատոսն առաջարկում է Հռոմ–Ալեքսանդրիա–Երուսաղեմ–Անտիոք–Կոստանդնուպոլիս հերթականու-

[12] Եկեղյաց տեղանունն է, որը հուն. աղբյուրներում հայտնի է որպես Κελτσινή.

[13] **Մուրադյան Պ.,** *ԺԱ–ԺԳ. դարերի հայ–վրացական…*, էջ 106:

[14] **Казарян Г.**, Послание иерусалимского патриарха Фомы и Феодора Абу Курры, отправленное в Армению, *Տայքը պատմության խաչուղիներում*, Գյումրի, ՀՀ ԳԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, 2024, էջ 53–57:

թյունը[15], ապա Պղնձահանեցին առաջ է քաշում հնգապետության այլ հաջորդականություն՝ Երուսաղեմ, Անտիոք, Հռոմ, Ալեքսանդրիա, Եփեսոս: Սիմեոնն իր ողջ շարադրանքի մեջ հետևողականորեն առաջնություն է ընծայում Երուսաղեմի Մայր եկեղեցուն, այնինչ Կոստանդնուպոլսի փոխարեն, ինչպես արդեն ասվեց, միշտ նշում է Եփեսոսը[16]:

Սուրբ Գրիգոր Լուսավորչի կերպարը

Հայկական քրիստոնեությունն անհնարին է պատկերացնել առանց հայոց Լուսավորչի կերպարի: Սբ Գրիգորի՝ հոգևոր այդ հսկայի անձը անխուսափելիորեն հանդիպում է ջատագովական գրականության մեջ՝ կռվան լինելով այս կամ այն կողմի համար: Ուշագրավ է, որ եթե առաքելական հայերի համար Գրիգոր Լուսավորիչը խորհրդանշում է իրենց բացառիկությունն ու եկեղեցական անկախությունը[17], ապա օր-

[15] Երբեմն էլ՝ Հռոմ, Երուսաղեմ, Ալեքսանդրիա, Անտիոք, Կոստանդնուպոլիս հերթականությունը (տե՛ս **Дионисий (Шлёнов), игум., Рапава М. А.**, Второе и третье..., с. 111), մինչդեռ «Առաքելական սահմանադրության» մեջ առաջարկվում է Երուսաղեմ, Անտիոք, Ալեքսանդրիա, Հռոմ շարքը (տե՛ս Les Constitutions Apostoliques, t. III, Livres VII et VIII, introduction, texte critique, traduction et notes par M. Metzger, *Sources Chrétiennes*, 336, 2008, p. 108): Ուշագրավ է, որ «Կանոնագիրք Հայոց»-ում անթեղված «Կանոնք առաքելականք» միավորի մեջ կա եկեղեցական աթոռների ու դրանց առաջին գահակալների հետևյալ հաջորդականությունը. Երուսաղեմ, Պաղեստին, Արաբիա, Փյունիկե-Հակոբոս Տյառնեղբայր. Ալեքսանդրիա, Եգիպտոս, Եթովպիա-Մարկոս ավետարանիչ. Հնդկաստան-Թովմաս առաքյալ. Անտիոք, Սիրիա, Կիլիկիա, Գաղատիա և Պոնտոս-Պետրոս առաքյալ. Հռոմ, Իտալիա, Իսպանիա, Բրիտանիա, Գալլիա-Պետրոս առաքյալ. Եփեսոս, Թեսաղոնիկե, Փոքր Ասիա, Կորնթոս-Հովհաննես ավետարանիչ. Նիկիա, Նիկոմիդիա, Բյութանիա-Անդրեաս առաքյալ. Բյուզանդիոն, Թրակիա-Ղուկաս ավետարանիչ. Եդեսիա, Մծբին, Միջագետք և Հայք-Թադեոս. Պարսկաստան-Պարթևստան, Ասորեստան, Խուժաստան ևն – Ադդե՝ աշակերտ Թադեոսի (տե՛ս *Կանոնագիրք Հայոց* (աշխ. Վ. Հակոբյանի), հ. Ա, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Երևան, 1964, էջ 58-63):

[16] Սիմեոնի այս տողերը, պատմական ենթատեքստի հրամայականներից բացի, ունեն նաև գրական պատրաստի հումք, քանի որ հայ մատենագրության մեջ արդեն իսկ կային հնգապետության (ավելի ստույգ՝ քառապետության) վարդապետության տվյալները: Այսպես, ըստ Մաշտոց Եղիվարդեցու (9-րդ դ.), որ իր տեղեկությունները քաղել է Սողոմոն Մաքենացու՝ մեզ չհասած մի գրությունից, երկրի վրա կան չորս պատրիարքություններ՝ ըստ չորս ավետարանիչների, ըստ այսմ՝ Մարկոս-Ալեքսանդրիա, Անտիոք-Մատթեոս, Ղուկաս-Հռոմ, Հովհաննես-Եփեսոս (տե՛ս Թուխտ երանելոյն Մաշտոցի, նախ քան զկաթուղիկոսութիւն, առ տէր Գէորգ Հայոց կաթուղիկոս վասն Սիւնեաց խաչին, թէ է՞ր աղագաւ տուաւ, *Մատենագիրք Հայոց*, Թ հատ., Թ դար (Յաւելուած), էջ 572): Մաքենացու այս վկայությունը կրկնել են հետագայի հայ մատենագիրները՝ Մովսես Դասխուրանցին, Հովհաննես Դրասխանակերտցին, Ներսես Լամբրոնացին, Մխիթար Գոշը, Ստեփանոս Օրբելյանը ևն (տե՛ս **Շիրինյան Ս. Է.**, Ընդհանրական եկեղեցու առաքելական աթոռների վարդապետության ձևավորումը և զարգացումը, *Լևոն Խաչիկյան 90. Նյութեր Մատենադարանի հիմնադիր տնօրենի ծննդյան իննսունամյակին նվիրված միջազգային գիտաժողովի (9-11 հոկտեմբերի 2008 թ.)*, Երևան, «Նաիրի», 2010, էջ 90-99):

[17] Հմմտ. **Dorfmann-Lazarev I.**, The Apostolic Foundation Stone: the Conception of Orthodoxy in the Controversy between Photius of Constantinople and Isaac Surnamed Mṙut (882), *Byzantine*

թողոքների համար նա, ընդհակառակը, խորհրդանշում է Հայ եկեղեցու՝ Տիեզերական եկեղեցու մասնիկը լինելու պարագան: Այլ կերպ ասած՝ առաջին դեպքում Գրիգորը անջատման խորհրդանիշն է, երկրորդ դեպքում՝ միության[18]: Հենց այդպիսին է Լուսավորչի կերպարը դիտարկում նաև Պոլնձահանեցին:

Իր եկեղեցաբանական խորհրդածությունների մեջ Սիմեոնը՝ նորից ի տարբերություն Նիկետասի, ավելի մանրամասն է անդրադառնում Հայոց Լուսավորչի դերին: Վերջինս, դաստիարակված լինելով Կապադովկիայում և հասու լինելով առաքելական ավանդությանը, գալիս է Հայք, որտեղ ըստ Սիմեոնի՝ «ոչ բնաւ լսեալ էր անուն Աստուծոյ և ոչ հաւատոցն Քրիստոսի»[19]: Այստեղ Լուսավորիչը «բազմազան չարչարանօք, եւ անբաւելի սքանչելեօք, առաւել քան զաւուրս առաքելոցն զորս առնէին», կարողացավ դարձի բերել Տրդատ արքային ու ողջ Հայոց աշխարհը: Դրանից հետո նա ուղևորվեց Կապադովկիայի Կեսարիա քաղաք, «ուր որ էր մի արքեպիսկոպոս Եփեսոսի» և հենց նրանից էլ ձեռնադրվեց եպիսկոպոս: Սիմեոնը խոսում է մի դաշինքի մասին, ըստ որի՝ Լուսավորիչը, քրիստոնեական ողջ կարգ ու կանոնն ստանալով ու բերելով Հայք, երդվեց «որպէս զի ոչ թուլասցին կամ փոխիցին յաւանդիցն, զոր առին, եւ ոչ հատցին ի ձեռնադրութենէ եւ յորդիութենէ այնմ եկեղեցւոյ»[20]: Այդ դաշինքը պահվել է մինչև սբ Սահակը, երբ «կաթողի-

---

Orthodoxies (Papers from the Thirty-sixth Spring Symposium of Byzantine Studies, University of Durham (23–25 March 2002), (ed. A. Louth, A Casiday), Ashgate, 2006, c. 191–196:

[18] Այդպիսին է սբ Գրիգորը ներկայացված Փոտի՝ առ Զաքարիա կաթողիկոս թղթում. «Եւ յետոյ սուրբ հոգեկիր վարդապետքն հետեւողաց առաքելոցն ի Յունաց աշխարհէս էին, որք են այսոքիկ. Բարսեղ Կեսարացի, Գրիգոր Սքանչելագործ եւ Գրիգոր Աստուածաբան, Գրիգոր Նիւսացի եւ Գրիգոր Լուսաւորիչն ի Կեսարիա ուսեալ, եւ Յովհան Ոսկեբերան, Եպիփան եւ Պրոկղ եւ Աթանաս եւ Կիւրեղքն եւ Յուստինոս եւ Եռինոս եւ Ամբրոսիոս եւ Դիոնեսիոս, որք էին համեմատ սրբոց առաքելոցն եւ ամենայն սուրբ մարտիրոսք, որք տիեզերք գյիշատակս կատարեն. նշխարք նոցա ի Կոստանդնուպոլիս հաճեցան բնակել» (տե՛ս Թուղթ Փոտայ պատրիարքի առ Զաքարիա կաթողիկոս Հայոց Մեծաց վասն երկու միաւորեալ բնութեանցն մի անձնաւորութիւն գոլոյ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եւ վասն ճշմարտախոհութեան ժողովոյ սուրբ Հարցն որ ի Քաղկեդոն, *Հանդէս ամսօրեայ*, 1968, թիւ 1–3, 77–78):

[19] **Մուրադյան Պ.**, *ԺԱ–ԺԳ. դարերի հայ-վրացական…*, էջ 106: Մեկ այլ տեղում Սիմեոնը, ժխտելով Թադեոս առաքյալի և Արտազի Աթոռի հայոց ավանդությունը, գրում է. «Ապա ասէք. Սալմասթոյ եկեղեցւոյն որդիք եմք եւ Թադէոսի Առաքելոյն, եւ յոյժ ստէք: Զի այդ անուն եւ ոչ երբէք լուեալ է յառաքելոց կամ ի հարց, եւ ոչ նախնին ձեր Սուրբն Գրիգորիոս գիտէր, եւ ոչ ասաց զայդ» (նույն տեղում, էջ 109):

[20] **Մուրադյան Պ.**, *ԺԱ–ԺԳ. դարերի հայ-վրացական…*, էջ 107: Պոլնձահանեցու մատնանշած դաշինքն իսկապես առկա է Ագաթանգեղոսի երկում և կոչվում է «ՊատՃէն թղթոյն պատասխանի»: Այստեղ, ի մասնավորի, Լուսավորչին ձեռնադրած Ղևոնդ Կեսարացին գրում է. «Եւ հաստատեալ կացցէ վկայութիւն ի մէջ երկոցունց կողմանցս, զի պարգեւաբաշխութիւն նորոգ քահանայապետութեանդ ձերոյդ նահանգիդ առ ի մէնջ՝ կացցէ անշարժ յեկեղեցւոջս Կեսարու, ուստի եւ հանդերձեցաւ ձեզ պատրաստեալ՝ փրկութեան ձեռնադրութիւն» (**Ագաթանգեղոս**, Պատմութիւն Հայոց, *Մատենագիրք Հայոց*, հ. Բ, ե դ., էջ 1698):

կոսք[21] եւթն մեծաշուք պատուով երթեալ ի Կեսարիայ ձեռնադրէին»[22]: Նույն հավատո միաբանությունը, ըստ Սիմեոնի, պահվել է մինչև Ներսես Բ կաթողիկոսն ու Հովհան Մայրագոմեցին, որոնք «ուխտադրուժ եղեն յերկիւղէն Պարսից սարսեալք», և ապա՝ Եզր կաթողիկոսից մինչև Մանազկերտի ժողովը, որից հետո «յայտնապէս ընկեցեալ զձեր կարգ եկեղեցւոյն Աստուծոյ, զամենայն նոր արարեալ ձեր Յոհաննու Օձնեցւոյ եւ Մաշտոցի եւ այլոցն օժանդակացն նոցա»[23]:

Այսպիսով, Սիմեոնի եկեղեցաբանությունը խստորեն սահմանափակված է հնգապետության շրջանակներով. դրանցից դուրս նա որևէ եկեղեցական կառույց չի ճանաչում: Այդ իսկ պատճառով նա կտրուկ եզրակացնում է. «Եւ վասն զի արտաքոյ քան զայս հինգ համաշխարհական եկեղեցեացս իշխանութեանց ոչ են ուրեք այլ բնաւ ուղղադաւան եկեղեցիք Քրիստոսի, ընդ որո՞յ ի նոցանէ իշխանութեամբ էք հաղորդ. վասն զի սոքա ամենեքեան մի եկեղեցի Քրիստոսի են եւ մի խոստովանութիւն ուղիղ հաւատոցն ժողովին, ոչինչ իւիք բաժանելով ի միմեանց յարդարութիւնս օրինացն: Եւ դուք ի մարմնոյն Քրիստոսի հատեալ էք եւ յիւրում կաթուղիկէ եւ առաքելական եկեղեցւոյն օտարացեալ՝ ոչ համաձայնելով սուրբ եւ առաքելական եկեղեցեացն»[24]:

Եկեղեցաբանությունից՝ մարդաբանություն

Իր միտքն առավել հասկանալի դարձնելու նպատակով Պղնձահանեցին դիմում է օրինակի. ըստ նրա՝ մարդն Աստծուց ստեղծվել է որպես «երկրորդ աշխարհ», այլով բանիվ՝ միկրոկոսմոս՝ ավելի պատվելի, քան նույնիսկ տեսանելի աշխարհը: Մարդու անձն «ի մի գլուխ յօղեալ եւ կայ նովաւ ունել զկենդանութիւն», իսկ մարմնի բոլոր անդամները կառավարվում են հինգ զգայարաններով: Ճիշտ նույն օրինակով է կազմված նաև Քրիստոսի խորհրդավոր մարմինը՝ Նրան հավատացողների Եկեղեցին. աշխարհասփյուռ Եկեղեցիները՝ որպես Քրիստոսի Մարմնի զանազան անդամներ, կարգավորվում ու կառավարվում են հինգ գլխավոր աթոռներով, ինչպես հինգ զգայարաններով, և «ի մի գլուխն իւրեանց Քրիստոս յառին եւ միաւորին»[25]: Սիմեոնն այստեղ իրականում կրկնում

[21] Ի տարբերություն Ստիթատոսի, որը հրաժարվում է Հայոց եկեղեցու գլխին «կաթողիկոս» անվանել, այլ միայն «եպիսկոպոս» (տե՛ս **Дионисий (Шлёнов), игум., Рапава М. А.**, Второе и третье..., с. 114), Սիմեոնը անկաշկանդ կիրառում է այդ տիտղոսը՝ հավատարիմ մնալով ազգային ավանդությանը:

[22] **Մուրադյան Պ.**, *ԺԱ-ԺԳ. դարերի հայ-վրացական...*, էջ 107:

[23] Նույն տեղում, էջ 107:

[24] Նույն տեղում, էջ 110:

[25] Սիմեոնի այս միտքը հետաքրքիր է համեմատել Անանունի «Վասն ինն դասուց եկեղեցւոյ թէ ո՛րք են եւ ո՛րպէս վարին» երկի հետ, որը պահպանվել է Սյունյաց «պրոտոֆրոնտես» Ստեփանոս Օրբելյանի երկում. «Քանզի իմա՛ զեկեղեցի որպէս բոլոր անդամք մարմնոյ մարդոյ յօղեալ ի գլուխն Քրիստոս» (*Պատմութիւն նահանգին Սիսական, արարեալ Ստեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Սիւնեաց*, Թիֆլիս, 1910, էջ 112):

է Նիկետասին, սակայն նրանից էականորեն տարբերվում է, երբ թվարկում է այդ հինգ Եկեղեցիները. «Եւ հինգս ասեմ՝ զԵրուսաղէմ, զՀռոմ, զԱղէքսանդրիայ, զԱնտիոք եւ զԵփեսոս[26]. որով արեւմուտք եւ հարաւակողմն, արեւելք եւ հիւսիսակողմն ամենայն ի մի Քրիստոս միաւորին ... ի մի իւր գլուխն Քրիստոս, ի ձեռն ուղղափառ սուրբ հաւատոյն յօղեալ եւ հաստատեալ ի նմա»[27]:

Երկնային եկեղեցի–երկրավոր եկեղեցի

Սիմեոն Պղնձահանեցու աստվածաբանական մտորումների մեջ հատկապես արժեքավոր է Եկեղեցու արտաքին կողմի հարցը՝ սկսած նրա կարգուկանոնից և ավարտած քարեղեն կառույցով: Այստեղ նա ինքնուրույն է մտածում՝ հենվելով գլխավորապես Դիոնիսիոս Արիսպագացու[28] և նրան մեկնաբանած Մաքսիմոս Խոստովանողի[29] վրա և ստեղծագործաբար շարադրելով իր եկեղեցաբանական հայացքները:

Եկեղեցին Աստծո տունն է[30], միևնույն ժամանակ՝ Աստծո պատկերը, համայն աշխարհի, նյութական երկրի, ինչպես նաև ողջ մարդու և առանձին վերցրած՝ նրա հոգու պատկերը:

---

[26] Նիկետասի մոտ հնգապետության հերթականությունն այլ է. Հռոմ, Երուսաղեմ, Ալեքսանդրիա, Անտիոք և վերջում՝ Կոստանդնուպոլիս (տե՛ս **Дионисий (Шлёнов), игум., Рапава М. А.**, Второе и третье..., с. 117): Բացի դրանից՝ «Մերժեա ի քէն զամենայն զպոռնիկ» աստվածաշնչային համարը Սիմեոնը վերագրում է ոչ թե Դավթին, ինչպես այդ անում է Նիկետասը, այլ Մովսեսին: Եվ վերջապես, եթե եկեղեցաբանություն–մարդաբանություն թեմայով Նիկետասը եզրափակում է իր ճառը, ապա Սիմեոնը շարունակում է իր խոսքը՝ արծարծելով դռնփակ պատարագի հարցը, ներկայացնելով Դիոնիսիոս Արիսպագացու եկեղեցաբանությունը ևն:

[27] **Մուրադյան Պ.**, *ԺԱ–ԺԳ. դարերի հայ–վրացական...*, էջ 111:

[28] Ըստ Աթենքի համալսարանի պատվավոր պրոֆեսոր, անվանի պատմաբան Վ. Ֆիդասի ուսումնասիրության՝ Դիոնիոսիոս Արիսպագացու անունով պահպանված երկերի իրական հեղինակը Անտիոքի չափավոր հակաքաղկեդոնական պատրիարք Պետրոս Թափիչն է (470–471, 475–477, 485–488 թթ.), որը հեղինակել է այդ կարևոր ստեղծագործությունները՝ կամրջելու համար քաղկեդոնականների ու հակաքաղկեդոնականների միջև ջրբաժանը: Մեր այս ուսումնասիրության համար չափազանց կարևոր է այն, որ, ինչպես Վ. Ֆիդասն է ցույց տալիս, Պետրոս Թափիչն Աթենքում ուսանել է նեոպլատոնական փիլիսոփա Պրոկլ Դիոդոքոսին (410–485 թթ.), և հենց նրա ուսմունքից ոգեշնչված՝ շարադրել է իր աստվածաբանական երկերը (տե՛ս **Φειδάς Β. Ι.**, *Πέτρος ο Κναφεύς. Ο Διονύσιος των Αρεοπαγιτικών έργων*, Αθήνα, Αποστολική Διακονία της Εκκλησίας της Ελλάδος, 2022): Փաստորեն, Սիմեոն Պղնձահանեցին ինչ–որ զարմանալի հոտառությամբ հասկացել է, որ Արիսպագացու աստվածաբանության հիմքը հենց Պրոկլն է, և այդ պատճառով էլ ձեռնարկել է նրա «Շաղկապք աստուածաբանութեան» երկի հայերեն թարգմանությունը:

[29] Մաքսիմոս Խոստովանողը (580–662 թթ.), ի թիվս այլ գործերի, շարադրել է Դիոնիսիոս Արիսպագացու «Յաղագս եկեղեցական նուիրապետութեան» երկի մեկնությունը՝ «Խորհրդածութիւն» (Μυσταγωγία) վերտառությամբ (տե՛ս **Maximi Confessoris** Mystagogia una cum Latina interpretatione Anastasii Bibliothecarii, edita a Christian Boudignon, *Corpus Christianorum Series Graeca*, 69, Turnhout, Brepols Publishers, 2011.

[30] Մաքսիմոս Խոստովանողի երկում, որից օգտվել է Սիմեոնը, ոչ թե «տուն» է, այլ՝ «տիպ» (τύπος) (տե՛ս **Maximi Confessoris** Mystagogia..., p. 10):

Եկեղեցին Աստծո տունն է, քանի որ նրա պատճառն Աստված է. Աստված է երեք անշփոթ իրողությունների՝ պատճառի, սկզբի ու վախճանի միության կետը, քանի որ «ի նմանէ եւ նովաւ եւ ի նոյն ամենայն»[31]: Աստծո պես Եկեղեցին մեկ հավատի ու շնորհի մեջ է միավորում համայն մարդկությունը՝ անկախ տեղից ու ժամանակից, ազգությունից կամ մասնագիտությունից, առաքինություններից ու գիտելիքներից[32]:

Եկեղեցին նաև համայն աշխարհի խորհրդանիշն է, քանի որ, թեպետ բաժանված է խորանի և բուն տաճարի, այդուհանդերձ, մեկ ամբողջականություն է կազմում[33]: Դրա մասին է խոսում նաև այն, որ նույն քահանան, որ պատարագում է խորանում, պատարագի ավարտին դուրս է գալիս և ամբիոնի հետևում կարդում վերջին աղոթքը[34]:

Եկեղեցին է «յերկրէ երկինք տեղի միաւորութեան Աստուծոյ եւ հրեշտակաց և մարդկան, բնակարան սրբոց, ժողովարան մերժելոց, յարուցանող անկելոց, պահապան կացելոց, վերածննդութեան առիթ, աստուածացուցանելոյ պատճառ, ընդ ինքն եւ ընդ Աստուած միացուցանող եւ կապող զհամօրէն էսս առ դնելով զամենեսեան ի մի պատճառն Աստուած: Նախ զմարմին ընդ հոգւոյն եւ ապա զամենայն մարդկանս ընդ միմեանս, և ապա զամենեսեան ընդ Աստուած կապէ եւ միաւորէ»[35]:

---

[31] **Մուրադյան**, *ԺԱ-ԺԳ. դարերի հայ-վրացական…*, էջ 113: Պետք է նշել, որ այս և հաջորդ տողերում, որտեղ Սիմեոնը հակիրճ վերաշարադրում է Մաքսիմոսի «Խորհրդածութեան» առաջին մի քանի գլուխները, լեզվական առումով խրթին են, տարբերվում են Պղնձահանեցու մնացյալ բնագրից, և այդ տողերի իմաստը կարելի է ընկալել միայն հունարեն բնագրի համեմատությամբ:

[32] **Մուրադյան Պ.**, *ԺԱ-ԺԳ. դարերի հայ-վրացական…*, էջ 113:

[33] Նույն տեղում, էջ 113: Մաքսիմոսի՝ վերոնշյալ եկեղեցաբանական խոհերի մեկնաբանությունը տե՛ս **Ματσούκας Ν.**, *Κόσμος, ἄνθρωπος καὶ κοινωνία κατὰ τὸν Μάξιμο Ὁμολογητή*, Ἀθήνα, ἐκδ. Γρηγόρη, 2014, էջ 219–230:

[34] Այս հատվածն արդեն Սիմեոնի հեղինակային միտքն է: Եկեղեցու մեջ՝ ամբիոնի հետևում, ընթերցվող աղոթքը հետևյալն է. «Որ օրինես զայնոսիկ, որ օրինեն զքեզ, Տէր, եւ սուրբ առնես զյուսացեալսն ի քեզ. կեցո զժողովուրդս քո, եւ օրհնեա զժառանգութիւնս քո: Զլրումն եկեղեցւոյ քո պահեա: Սուրբ արա զնոսա՝ որք ողջունեն սիրով զվայելչութիւն տան քո: Դու մեզ փառաւորեա աստուածային զօրութեամբ քո, եւ մի թողուր զյուսացեալքս ի քեզ: Խաղաղութիւն պարգեւեա ամենայն աշխարհի, եկեղեցեաց, քահանայից, թագաւորաց մերոց եւ զինուորեալ մանկանց նոցա եւ ամենայն ժողովրդեանս: Զի ամենայն տուրք բարիք եւ ամենայն պարգեւք կատարեալք ի վերուստ են՝ իջեալ ի քէն որ ես հայր լուսոյ: Եւ քեզ վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ յաւ.» (տե՛ս *Սրբազան Պատարագամատոյցք Հայոց. Թարգմանութիւնք Պատարագաց Յունաց, Ասորւոց եւ Լատինացւոց հանդերձ քննութեամբք, նախագիտելեօք ու ծանօթութեամբք ի Հ.* **Յովսեփայ վ. Գաթրճեան** ի Մխիթ. ուխտէն, հրատ. հանդերձ յաւելուածովք ի **Հ. Յակովբոսէ վ. Տաշեան**, ի Մխիթ. ուխտէն, Վիեննա, Մխիթ. տպարան, 1897, էջ 382–383): Ոսկեբերանյան պատարագի այս նույն աղոթքը կա նաև Հայ առաքելական եկեղեցու Պատարագամատույցի մեջ (տե՛ս *Խորհրդատետր սրբազան Պատարագի ըստ արարողութեան Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ*, Երուսաղէմ, Սրբոց Յակոբեանց «Եղիվարդ» գունատիպ տպարան, 1989):

[35] **Մուրադյան Պ.**, *ԺԱ-ԺԳ. դարերի հայ-վրացական…*, էջ 113:

Հենվելով Եբրայեցվոց թղթի վրա (Եբր. 8, 5)՝ Սիմեոնը կարծում է, որ Աստված Սինա լեռան վրա Մովսեսին ցույց է տվել հինկտակարանյան Եկեղեցու «նախատիպ օրինակը». վկայության Խորանը՝ երկնքի խորհրդանիշն ու նրա պարագաները, ինչպես նաև երկնային նվիրապետությունը, որը և երկրավոր, նորկտակարանյան Եկեղեցու սկզբնատիպն է. «Իսկ զիրեշտակաց ինն կարգաց կերպարանս եւ զտիպ, յինն կարգ քահանայապետութեանց եւ անօթից եւ զգեստուց նոցա»[36]:

Արծարծելով նորկտակարանյան Եկեղեցու ծիսակարգի հարցը՝ Սիմեոնը յուրովի է մեկնում այն, որ Քրիստոսը ոչ թե լուծել է Օրենքը, այլ՝ լրացրել. ըստ նրա՝ Տերը և առաքյալները ոչ թե վերացրել են հինկտակարանյան Եկեղեցու կարգ ու կանոնը, այլ նոր՝ հոգևոր բովանդակությամբ են այն օժտել: Այստեղ Պղնձահանեցին նկարագրում է քրիստոնեական տաճարի շենքը, որը բաղկացած է երեք մասերից.

ա. Սրբություն Սրբոց կամ խորան՝ կառուցված «ի քարանց պատուականաց»: Այստեղ է սուրբ սեղանը, աշտանակները, խնկավառությունը, պատարագի անոթներն ու սպասքը, և այստեղ միայն քահանաներն են մուտք գործում:

բ. Բուն եկեղեցի՝ «տեղի գոլ հասարակաց եւ մարդկան հաւատացելոց», որտեղ են դասերը և այլ «կայք ու կայանք»-ը:

գ. «Գաւիթքն եւ երախայանոցն՝ դեռ եւս ընծայելոցն եւ ոչ մկրտելոցն տեղի»[37]:

Հետևելով Դիոնիսիոս Արիսպագացուն՝ Սիմեոնը համապատասխանեցնում է հրեշտակաց դասերը՝ երկնային հիերարխիան, եկեղեցական նվիրապետության հետ[38]: Ըստ նրա՝ պատրիարքները, քահանայապետներն (եպիսկոպոսներն) ու քահանաները համապատասխանում են հրեշտակաց վերին դասերին՝ աթոռներին, սերովբեներին ու քերովբեներին: Սարկավագները նման են իշխանություններին, պետություններին ու զորություններին: Իսկ ստորին սպասավորները՝ ընթերցողները, դպիրներն ու երգեցողները, նմանվում են տերություններին, հրեշտակապետներին ու հրեշտակներին:

---

[36] Նույն տեղում, էջ 114:

[37] Նույն տեղում:

[38] Նույն մտքերն առկա են նաև արդեն հիշատակված Անանունի «Վասն ինն դասուց եկեղեցւոյ» երկի մեջ. «այսպէս լինէր երկին ի վերայ երկրի կառուցեալ. և երկնաւորք զերկրաւորքս ի նմա կացուցեալ. ապա պատշաճ էր երկնաւորացն դասու և սահմանաւ կարգաւորել ի մեջ եկեղեցւոյ ըստ երից քահանայապետութեանցն և ինն դասուցն ... զոր պա՛րտ է եկեղեցւոյ լրիւ ունել և անթերի. զի ամենայնիւ ամենևին ոչ է հնար պակաս զոլ նոցա. ապա թէ պակաս լինի, ոչ հաճի Աստուած. և նոյն զունակ պակաս լինի և շնորհքն աստուածեղէն» (*Պատմութիւն նահանգին Սիսական*..., էջ 108–112):

Մեծարժեք է եկեղեցական զգեստների խորհրդաբանությունը, որը մեզ է առաջարկում Պոնձահանեցին[39]: Եկեղեցական աստիճանների հանդերձանքը տարբերվում է աշխարհականներից, և դրանցից ամեն մեկն ունի իր հատուկ խորհուրդը: Սիմեոնը անվանապես չի թվարկում այդ զգեստները, սակայն նրա նկարագրությունից դժվար չէ հասկանալ, որ խոսքը հետևյալ յոթ հանդերձների մասին է.

1. Շապիկ, որ ծածկում է ողջ մարմինը:
2. Գոտի, որ խորհրդանշում է մարմնավոր ցանկությունների զսպումը[40]:
3. Փորուրար, որ նշանակում է Քրիստոսի լուծը[41]:
4. Բազպան, որ «զձեռն զարդարելով զգործս վայելուչս ուսուցանէ գործել»[42]:
5. Հողաթափեր, որ «զոտսն պնդելով, ուղղեալ ունելով զգնացս»[43]:
6. Կոնքեռն («տախտակ»), որ «ի գօտիս կախեալ՝ զանուանս տէրունեան բրելով[44]»:

[39] Անհրաժեշտ է նշել, որ ծիսական զգեստների հարցը 12–13–րդ դդ. Հայ եկեղեցու կյանքի ամենախնդրահարույց թեմաներից էր, քանի որ շատ տեղերում հոգևորականներն առօրյա աշխարհիկ զգեստներով էին ծեսեր կատարում. տակավին Ներսես Դ Շնորհալի հայրապետը (1166–1173 թթ.) իր կոթողային «Թուղթ ընդհանրական»–ում խստիվ դատապարտում էր այդ երևույթը. «...Լեմք զոմանց, եթէ հասարակաց զգեստուք եւ աղտեղեալ տրեխաւք ելանեն ի բեմն սուրբ եւ զսարսափելի խորհուրդն անխորհրդական զգեստուք կատարեն: Եւ զայն ի պարկեշտութիւն անձանց համարին, հանելով զժողովուրդն արտաքոյ եկեղեցւոյն եւ զդուռն ընդդէմ ձգելով» (**Ներսէս Շնորհալի**, *Թուղթ ընդհանրական Ներսէսի կաթուղիկոսի Հայոց առ համարէն հայասեռ ազինս, որոց տեսչութիւն հաւատացաւ նմա ի Տեառնէ* (հրատ. Ա. Բոզոյեան), *Մատենագիրք Հայոց*, ԻԲ. հատ., ԺԲ. դ., էջ 97):

[40] Սույն խորհրդաբանությունը վերաբերում է վանական հանդերձանքի մաս կազմող կաշվե գոտուն (տե՛ս **Ղազարյան Գ.**, *Հայոց եկեղեցական զգեստները (պատմություն և խորհրդաբանություն), ավարտաձառ*, Ս. Էջմիածին, 2007 (անտիպ), էջ 102–103):

[41] Փորուրարի այս խորհրդաբանությունը, տարբերվելով բյուզանդական մեկնություններից, նույնական է հայոց մեկնիչների, մասնավորապես, Ներսես Լամբրոնացու և հայ առաքելական Ձեռնադրության Մաշտոցի՝ փորուրարին տրված խորհրդաբանությանը (տե՛ս **Ղազարյան Գ.**, *Հայոց եկեղեցական զգեստները...*, 54–55):

[42] **Մուրադյան Պ.**, *ԺԱ–ԺԳ. դարերի հայ–վրացական...*, էջ 115: Այս խորհրդաբանությունը չի հանդիպում ո՛չ բյուզանդական, ո՛չ հայկական աղբյուրներում, բայց թերևս, հետագայում այն կրկնում է Գրիգոր Տաթևացին (տե՛ս **Ղազարյան Գ.**, *Հայոց եկեղեցական զգեստները...*, 58–59):

[43] Ուշագրավ է, որ ուղղափառ ծիսակարգում եկեղեցական հողաթափ գոյություն չունի: Երևում է, որ այս հարցում ուղղափառ հայերը տարբերվել են բյուզանդացիներից՝ հետևելով հայրենի ավանդույթին:

[44] Այսպես է հրատարակության մեջ, որ պիտի լինի՝ «բերելով»: Սիմեոնն այստեղ ակնհայտորեն կրկնում է կոնքեռնի՝ Ներսես Լամբրոնացու կողմից տրված խորհրդաբանությունը. «Իսկ տախտակն դատաստանի՝ զոր կրէ սա ի վերայ բարձիցն, ըստ որում և ի հնումն քահանայապետն ի վերայ լանջացն, զայն տայ մեզ տարացոյց՝ թէ որպէս նա երկոտասան ակամբք զերկոտասան նահապետացն անուանս տանէր առաջի Աստուծոյ վասն քաւութեան որդւոցն բարեխօս, այսպէս և ես զանուն փրկչին մերոյ Քրիստոսի՝ որ է ի սորին վերայ, տանիմ առաջի Աստուծոյ միջնորդ հաշտութեան» (**Սրբոյն Ներսեսի Լամբրոնացւոյ Տարսոնի եպիսկոպոսի** *Խորհրդածութիւնք ի կարգս Եկեղեցւոյ եւ Մեկնութիւն Խորհրդոյ Պատարագին*, ի Վենետիկ, ի տպ. Սրբոյն Ղազարու, 1847, էջ 148–149):

7. Շուրջառ (փիլոն), որ խորհրդանշում է «զբոլորումն երկնից». այն ամփոփում է մարմինը վերից վար և բաց է թողնում միայն գլուխը՝ հայելու համար առ Աստված[45]:

Այս յոթնատեսակ զգեստները խորհրդանշում են բոլոր առաքինությունների լրումը, որոնց վրա ավելանում է եմիփորոնը՝ Քրիստոսի Խաչը, որով եպիսկոպոսը նմանվում է Քրիստոսին[46]:

Եպիսկոպոսը Եկեղեցու միության կենտրոնական կետն է. խորանում, սուրբ սեղանի՝ աստվածային զենարանի առջև նա միավորվում է Աստծո հետ: Նրա հետ ու նրա միջոցով Աստծո հետ են միավորվում. քահանաները՝ խորանում, սարկավագները՝ սարկավագանոցում, և ապա ժողովուրդը՝ եկեղեցում, երախաներն էլ՝ երախայարանում. «ամենեքեան սոքա մի խորհրդով եւ մի կարգաւ յաւուրն եւթն անգամ միաւորին ընդ Աստուծոյ եւ հաղորդին Աստուծոյ եւ միմեանց: Եւ այսպէս չորրորդ առաքելական եկեղեցիքն՝ ընդ Երուսաղէմի»[47]: Այս հինգ Եկեղեցիները մեկ կարգով ու աղոթքով, մեկ միասնական տօնակարգով ու ծիսակարգով, ամենակարևորը՝ մեկ Պատարագով[48], միասին հաղորդվում են ու միավորվում իրար հետ, ապա, միանում մեկ Քրիստոսին ու Նրա հետ՝ Հոր և Սբ Հոգու հետ: Ահա այսպես, Եկեղեցու և պատարագի մեջ տեղի է ունենում մարդկության, ողջ արարչագործության և Արարիչ Աստծո տիեզերական միությունը[49]:

Եկեղեցաբանություն և եկեղեցական ճարտարապետություն

Ինչպես արդեն նշվեց, Սիմեոն Պղնձահանեցու համար միանգամայն բացառիկ է Գրիգոր Լուսավորչի կերպարը[50]: Նա Հայ եկեղեցու «Ոսկե դարաշրջանի» խորհրդանիշն է, որը մշտամնա ուղեցույց պիտի ծառայի բոլորի համար: Գրիգոր Լուսավորիչն ապացույցն ու խորհրդանիշն է սկզբնական շրջանում Հայ եկեղեցու՝ Տիեզերականին միացած

[45] Շուրջառին տրված սիմեոնյան այս մեկնությունը եզակի է և չի հանդիպում այլուր (հմմտ. **Ղազարյան Գ.**, *Հայոց եկեղեցական զգեստները*, 63–64): Եմիփորոնը որպես խաչի խորհրդանիշ են համարում Գերմանոս Կոստանդնուպոլսեցին ու Ներսես Լամբրոնացին (տե՛ս **Ղազարյան Գ.**, *Հայոց եկեղեցական զգեստները…*, 73):

[46] Տե՛ս **Մուրադյան Պ.**, *ԺԱ-ԺԳ. դարերի հայ-վրացական…*, էջ 115:

[47] **Մուրադյան Պ.**, *ԺԱ-ԺԳ. դարերի հայ-վրացական…*, էջ 115:

[48] Սիմեոն Պղնձահանեցու այս մտքերը լավագույնս ցույց են տալիս, թե աստվածաբանական ինչ հիմունքներով էր առաջնորդվում Կոստանդնուպոլիսը, երբ իր տեղական ծիսակարգն էր տարածում ողջ օրթոդոքս աշխարհում՝ դուրս մղելով, անգամ արգելելով տեղական առանձնահատկությունները և հետևողականորեն առաջ տանելով ծիսակարգի միօրինակեցումը:

[49] Տե՛ս **Մուրադյան Պ.**, *ԺԱ-ԺԳ. դարերի հայ-վրացական…*, էջ 115–116:

[50] Լուսավորչի կերպարի համակովկասյան նշանակության մասին տե՛ս **Мурадян П. М.**, Кавказский культурный мир и культ Григория Просветителя, *Կովկասեան մշակութային աշխարհը եւ Հայաստանը*, պրակ Բ, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2012, էջ 5–20:

լինելու փաստի, քանի որ նա, ձեռնադրված լինելով «պրոտոթրոն» Լևոնդիոսից, «ընդ նա միանալով միացաւ եւ ընդ նմա ամենայն եկեղեցի Քրիստոսի, նոյնպէս եւ յետ նորա էին ազգն նորա, եւ որ յառաջին ժողովն որ ի Նիկիայ ԳՃԺԸ. հարցն, որդւովն իւրով խօսեցաւ ընդ նոսա եւ միախոհ եղեւ, զորոյ զյիշատակն կատարեն ամենայն ազգք իբրեւ զմի ոք յառաքելոց Աստուծոյ»[51]:

Փորձելով ապացուցել, որ հակաքաղկեդոնական հայերը, դուրս մնալով ինքնապետության համակարգից, օտարացել ու հեռացել են ճշմարիտ եկեղեցուց, Սիմեոնը մատնացույց է անում հատկապես այն ծիսական խախտումները, որոնք կապված են ամենակարևոր խորհրդի՝ պատարագի հետ: Այսպես, նա անողոք դատապարտում է միջնադարյան Հայ առաքելական եկեղեցում լայն տարածում գտած «դռնփակ» պատարագի երևույթը, որի պատճառով խորհուրդը դարձել էր մասնավոր արարողություն. այն կատարվում էր դրամային փոխհատուցման դիմաց, մեկ քահանայի կողմից, փակ եկեղեցում և կամ մեծ եկեղեցիներում շինված բազմաթիվ պատարագամատույց սեղաններից մեկի վրա[52]:

Բացի դրանից՝ Սիմեոն Պղնձահանեցին մատնացույց է անում Գրիգոր Լուսավորչի ու Մանազկերտի ժողովի միջև ընկած ժամանակահատվածում կառուցված հայկական հնամենի տաճարները, որոնք մի կողմից, ապացուցում են տիեզերական միությունը, իսկ մյուս կողմից՝ նմանակման տիպար են. «Նոյնպէս եւ նախնին ձեր սուրբն Գրիգոր, եւ որք ընդ նմա յետոյ, ամս չորեքհարիւր ընդ նոսա միացեալ էր, մինչեւ ի ժողովն Մանծկերտի, որպէս վկայեն եկեղեցիք հին ի նմանէ օրհնեալքն, մեծամեծք յոյժ և մեծախորանս՝ ունելով Սարկաւագանոցս[53] եւ Երախանոցս[54]: Ունի ի խորանին և զաթոռս քահանայակցաց պատարագին, եւ զարդարեալ են պատկերօք տնօրինականացն եւ ամենայն սրբոց: Այս ամենայն վկայեն զմիաբանութիւնն: Իսկ ձերդ այժմ որպէ՞ս է կամ զի՞նչ կոչելի է, հանդերձելոց եւ կացելոց եւ ի բաց մերժելոցն յամենայն եկեղեցեացն եւ ձերոցդ եւս»[55]:

Սիմեոնն այստեղ նշում է հայոց հին տաճարներ, որոնք իսկապես տպավորիչ են իրենց չափսերով (հիշենք Տեկորը, Բագավանի տաճարը, Երերույքը, Զվարթնոցը, Թալինի ու Արուճի կաթողիկեները ևն), այնպիսի առանձնահատկություններ, ինչպիսիք են սինթրոնը («զաթոռս քահանայակցաց»՝ խորանի կիսաբոլորով մեկ աստիճանավոր քարե նստա-

[51] **Մուրադյան Պ.**, *ԺԱ-ԺԳ. դարերի հայ-վրացական…*, էջ 108:

[52] Այս ուշագրավ երևույթի մասին տե՛ս **Ղազարյան Գ.**, Դռնփակ պատարագը Հայ առաքելական եկեղեցու ծիսակարգում, *Բանբեր Մատենադարանի*, 33, 2022, էջ 259–284:

[53] Հուն. Διακονικόν. այսպես է կոչվում հարավային աբսիդը՝ նախատեսված սարկավագների համար:

[54] Այսինքն՝ երախաների՝ մկրտությանը պատրաստվող անձանց վայր:

[55] **Մուրադյան Պ.**, *ԺԱ-ԺԳ. դարերի հայ-վրացական…*, էջ 116:

բանները), սարկավագանոցը, երախանոցն ու պատկերները: Նշվածներից ուշագրավ են հատկապես սինթրոնը[56], որն առկա է Պղնձահանքի վանքի Սբ Աստվածածին կաթողիկեում (նկ. 1), բայց նաև այսպես կոչված «երախանոցը», որն արտաքին գավիթն է: Պղնձահանքի վանքում այն երկկամար է, ամեն մի կամարի վրա՝ երկթեք տանիք (նկ. 2): Երախանոց-գավիթ կա Խուճապի (նկ. 3) և Կիրանցի, ավելի փոքր չափսերով՝ Սեղվիի (նկ. 4), Թեժառույքի (նկ. 5) վանքերում[57]: Այն, որ ուղղափառ հայերի համար արտաքին գավիթն իսկապես էական եկեղեցաբանական նշանակություն է ունեցել, երևում է հետևյալ օրինակից. 13-րդ դ. կեսերին, երբ Անիի Տիգրան Հոնենցի Սբ Գրիգոր Լուսավորիչ տաճարը Հայ առաքելական եկեղեցուց անցնում է քաղաքի ուղղափառ համայնքին, եկեղեցու արևելյան կողմից անմիջապես կամարակապ մի գավիթ է կառուցվում, բուն տաճարն էլ զարդարվում է որմնանկարներով (նկ. 6)[58]:

Պղնձահանքի որմնանկարները

Համագումարի բերելով հնգապետության ու սբ Գրիգոր Լուսավորչի մասին Պղնձահանեցու խորհրդածությունները՝ հետաքրքրական է դրանք «կարդալ» ու համեմատել Պղնձահանքի Սբ Աստվածածին վանքի կաթողիկեի որմնանկարներում, որոնք ստեղծվել են կաթողիկեի կտիտորի՝ նույնինքն Իվանե Երկայնաբազուկ Զաքարյանի պատվերով[59]:

Հոյակերտ տաճարի խորանում՝ կենտրոնական լուսամուտի մեջ, ձախից պատկերված է Սեղբեստրոս Հռոմի պապը, իսկ աջից՝ Հակոբոս Տյառնեղբայրը: Հստակ է, որ այս կենտրոնական տեղում ներկայացված են Երուսաղեմի Մայր եկեղեցու և Պետրոս առաքյալի՝ Հռոմի աթոռները: Սեղբեստրոսից աջից՝ խորանի պատին՝ Բարսեղ Կեսարացին է, իսկ Հակաբոսի ձախից՝ Կոստանդնուպոլսի արքեպիսկոպոս

[56] Սինթրոն (σύνθρονον)՝ խորանի կոնքում աստիճանաձև կառույց, որի կենտրոնում գտնվում է եպիսկոպոսի գահը, իսկ աստիճանների վրա բազմում են քահանաները:

[57] Հետաքրքրական է, որ վրաց այնպիսի վանական համալիրներում, ինչպիսիք են Սափարան (Ջավախք), Դմանիսի Սբ Սիոնը, և Խոբին (Մենգրելիա-Սվանեթիա), ևս կան կամարակապ ճեմասրահներ: Եթե անգամ ընդունենք, որ այս երևույթը տարածված էր 13-րդ դ. հարավկովկասյան եկեղեցական ճարտարապետության մեջ, ապա ամեն դեպքում, Սիմեոն Պղնձահանեցին դրան տալիս է միանգամայն հստակ ու միանշանակ մեկնություն:

[58] Երախանոցների կառուցումը, բացի աստվածաբանական նշանակությունից, ուներ նաև գործնական կիրառություն, քանի որ, եթե տակավին 10-րդ դ. Հայ առաքելական եկեղեցին սահմանել էր քաղկեդոնականների վերամկրտություն, ապա 1103 թ. Ռուիս-Ուրբնիսի ժողովի 12-րդ կանոնով Վրաց եկեղեցին կարգադրել էր հայերի կրկնամկրտությունը (տե՛ս **Մելիքսեթ-Բեկ Լ.**, *Վրաց աղբյուրները Հայաստանի յեվ հայերի մասին, հ. Ա (Ե-ԺԲ դար)*, Յերեվան, Գիտհրատի տպարան, 1936, էջ 124-125):

[59] Պղնձահանքի վանքի որմնանկարների մասին համապարփակ տե՛ս **Лидов А. М.**, *Росписи монастыря Ахтала: История, иконография, мастера*. Москва: Университет Дмитрия Пожарского, 2014: Նշենք, որ որմնանկարների մեկնաբանության մեջ հարգելի ակադեմիկոսը հիմնականում վերհանել է դրանց ծիսական կողմը՝ չանդրադառնալով այն կողմերին, որոնք արծարծվում են մեր այս ուսումնասիրության մեջ:

Հովհան Ոսկեբերանը: Բարսեղ Կեսարացուց աջ՝ խորանի հյուսիսային լուսամուտի մեջ, տեսնում ենք Աբերկիոս Հերապոլսեցուն, իսկ նրա դիմաց՝ Վլաս Սեբաստացուն: Նրանից հետո՝ խորանի հյուսիսային պատին ներկայացված է Կոստանդնուպոլսի արքեպիսկոպոս Գրիգոր Աստվածաբանը, ապա Ալեքսանդրիայի պատրիարք Հովհան Ողորմածը (նկ. 7)[60], իսկ մյուս երեքի ինքնությունը պարզ չէ, քանի որ որմնանկարները ջնջված են: Խորանի աբսիդի հարավային լուսամուտի մեջ պատկերված են՝ աջից Կիպրիանոսը[61], իսկ ձախից՝ Ամբրոսիոս Մեդիոլանացին: Ապա, պատկերաշարը տարածվում է խորանի հարավային պատին, որտեղ ներկայացված են վեց այլ եպիսկոպոսներ: Ցավոք, այս հատվածի որմնանկարները խիստ վնասված են: Առաջին եպիսկոպոսի կարճ մորուսից ու կարծես ճաղատ գլխից կարելի է ենթադրել, որ սա Նիկողայոս Մյուռացի Սքանչելագործն է[62]: Նրանից հետո, դատելով հունարեն մակագրության ΟΦΟΡΟΣ մնացորդից, Անտիոքի նշանավոր հայրապետ, առաքելական այր Իգնատիոս Աստվածազգյացը (Ἰγνάτιος ὁ Θεοφόρος): Հաջորդ հայրապետը, դատելով լայն, դեպի ծայրերը տարածված մորուքից, Մեծն Աթանաս Ալեքսանդրացին է (նկ. 8)[63]:

Ստորին գոտում՝ ձախից, Պետրոս առաքյալի աշակերտ Կղեմես պապն է, իսկ աջից՝ Մեծ Հայքի Լուսավորիչ Գրիգորը: Կղեմեսի կողքին հերթով պատկերված են Հակոբ Մծբնա, Գրիգոր Նեոկեսարացի Սքան-

---

[60] Ա. Լիդովին չի հաջողվել վերծանել պահպանված հունարեն մակագրությունը որտեղ ընթեռնելի են Ο ΕΛΕΙ տառերը: Արդ, անկասկած է, որ այստեղ Հովհան Ողորմածն է (Ἰωάννης ὁ Ἐλεήμων): Հովհան Ողորմածն ապրել է 7-րդ դ., հայտնի է եղել աղքատասիրությամբ ու բարեգործությամբ, որի համար էլ որպես սուրբ է պատվվում ոչ միայն ուղղափառների, այլև ղպտիների կողմից:

[61] Ըստ հայերեն «Վկայաբանութեան», որը թարգմանվել է 5-րդ դ. և մեզ է հասցրել մի հնագույն ավանդույթ՝ Կարթագենի (Կարքեդոնի) եպիսկոպոս Կիպրիանոսը (3-րդ դ.) նույնացված է անտիոքացի կախարդ Կիպրիանոսի հետ (տե՛ս **Ակինեան Ներսէս, վրդ.,** Վկայաբանութիւն ս. Կիպրիանոսի Կարքեդոնի եպիսկոպոսի, *Մատենագրական հետազօտութիւններ. քննութիւն եւ բնագիր*, հ. Ա, Վիեննա, Մխիթ. տպ., 1922, էջ 87–112): Ուշագրավ է, որ ըստ Գրիգոր Նարեկացու՝ Վասպուրականի Ապարանից վանքում այլ սրբոց հետ, պահվել են նաև Կիպրիանոս Կարթագենացու և Հուստիանե կույսի մասունքները (նույն տեղում, էջ 100): Հայոց հայսմավուրքների բոլոր խմբագրություններում, սակայն, Կիպրիանոսը մեկն է՝ անտիոքացի կախարդը, որն իր դարձից հետո եպիսկոպոս է դարձել: Արդ, Պղնձահանքի որմնանկարների դասդասման երկու տախտակերում նշում ենք երկու Կիպրիանոսներին էլ՝ ստույգ չիմանալով, թե երկուսից որ մեկն է պատկերված:

[62] Նիկետաս Ստիթատոսի՝ ընդդեմ Հայոց 4-րդ ճառից տեղեկանում ենք, որ 11-րդ դ., առաքելական հայերը, տեղյակ չլինելով սբ Նիկողայոսի մասին, բյուզանդացիներին մեղադրել են նրանում, թե իբր վերջիններս որպես սուրբ են պատվում Հայտնության գրքում հիշատակված գնոստիկ Նիկողայոսին (տե՛ս **Дионисий (Шленов), иеродиакон**, *Преподобный Никита Стифат и его богословские сочинения*. Диссертация на соискание ученой степени кандидата богословия, Сергиев Посад, 1998, с. 282): Ուստի, Պղնձահանքում առավել քան տեղին է սբ Նիկողայոս Սքանչելագործի որմնանկարը: Նշենք, որ 1297 թ. Մյուռայի հրաշագործ արքեպիսկոպոսի որմնանկար է ստեղծվում նաև Դաղիվանքում (նկ. 9, 10):

[63] Այս երեք հայրապետների պատկերները Լիդովը ևս չի նույնականացրել:

չելագործ, Կյուրեղ Ալեքսանդրացի, Եվսեբիոս Սամոսատցի[64], Դիոնիսիոս Արիսպագացի, Ակակ Մելիտենեցի, Տիմոթեոս Պրուսացի, իսկ Լուսավորչի կողքին՝ Գերմանոս Կոստանդնուպոլսեցի, Ամփիլոքիոս Իկոնիացի, Գրիգոր Ակրագանտացի, Պողոս Խոստովանող Կոստանդնուպոլսեցի, Եվստաթեոս («Թաղեոս») Թեսաղոնիկեցի, ոմն անանուն ու Պետրոս Ալեքսանդրացի հայրապետները:

Խորանում պատկերված այս եպիսկոպոսների պատկերները քննելիս՝ հնարավոր է դրանք դիտարկել մի քանի տեսանկյունից:

<u>ա. Հնգապետության համակարգը</u>: Փորձենք պատկերված հայրապետներին դասդասել ըստ հինգ «աշխարհասփյուռ» եկեղեցիների.

Երուսաղեմ	Հռոմ	Կոստանդնուպոլիս	Ալեքսանդրիա	Անտիոք
Հակոբոս Տյառնեղբայրը	Կղեմես պապ Սեղբեստրոս պապ *Ամբրոսիոս Մեդիոլանացի* *Կիպրիանոս Կարթագենացի* *Դիոնիսիոս Արիսպագացի* *Գրիգոր Ակրագանտացի*	Հովհան Ոսկեբերան Գրիգոր Աստվածաբան Պողոս Խոստովանող Գերմանոս *Բարսեղ Կեսարացի* *Վաս Սեբաստացի* *Ակակ Մելիտենեցի* *Աբերկիոս Հիերապոլսեցի* *Գրիգոր Նեոկեսարացի* *Տիմոթեոս Պրուսացի* *Ամփիլոքիոս Իկոնիացի* *Նիկողայոս Մյուռացի* *Եվստաթեոս Թեսաղոնիկեցի*	Աթանաս Մեծ Կյուրեղ Ալեքսանդրացի Պետրոս Ալեքսանդրացի Հովհան Ողորմած	Իգնատիոս Աստվածազգաց Կիպրիանոս *Հակոբ Մծբնացի* *Եվսեբիոս Սամոսատցի*

[64] Ա. Լիդովը կարծում է, որ սա Եվսեբիոս Կեսարացին է (տե՛ս **Лидов А. М.**, *Росписи монастыря Ахтала*…, с. 72): Հակառակ նրա, որ Եվսեբիոս Կեսարացին՝ որպես եկեղեցու պատմահայր, վիթխարի հեղինակություն է վայելել միջնադարում, այդուհանդերձ, որպես սուրբ չի ընկալվել: Մեր կարծիքով՝ միանշանակ է, որ այստեղ արիոսականության դեմ պայքարած ու նահատակված Եվսեբիոս Սամոսատցին է:

Ցավոք սրտի, քանի որ խորանում պատկերված մի քանի եպիսկոպոսների որմնանկարները վնասված են, սույն ցուցակը լիակատար չէ: Այդուհանդերձ, մեծավ մասամբ, օգնում է հասկանալ այն եկեղեցական աշխարհագրությունը, որ նկարիչն ունեցել է իր մտահղացման մեջ: Տեսանելի է, որ խորանի որմնանկարների ու Սիմեոն Պղնձահանեցու հայացքների մեջ կան տարբերություններ: Մասնավորապես, մենք տեսնում ենք, որ պահպանված որմնանկարներում հիմնականում Կոստանդնուպոլսի և Հռոմի աթոռներին ենթակա եպիսկոպոսներն են, իսկ Եփեսոսը ներկայացված չէ:

բ. Եկեղեցական տոնացույց. շատ հետաքրքրքական պատկեր է ստեղծվում, երբ խորանի հայրապետներին դիտարկում ենք նրանց հիշատակի օրերի տեսանկյունից՝ ըստ բյուզանդական եկեղեցական տոնացույցի[65].

ՍԵՊՏԵՄԲԵՐ 30. Գրիգոր Լուսավորիչ
ՀՈԿՏԵՄԲԵՐ 2. Կիպրիանոս 3. Դիոնիսիոս Արիսպագացի 22. Աբերկիոս Հերապոլսեցի 23. Հակոբոս Տյառնեղբայր
ՆՈՅԵՄԲԵՐ 6. Պողոս Խոստովանող 12. Հովհան Ողորմած 13. Հովհան Ոսկեբերան 17. Գրիգոր Նեոկեսարացի 23. Ամփիլոքիոս Իկոնիացի և Գրիգոր Ակրագանտեցի 24. Կղեմես պապ և Պետրոս Ալեքսանդրացի
ԴԵԿՏԵՄԲԵՐ 6. Նիկողայոս Սքանչելագործ 7. Ամբրոսիոս Մեդիոլանացի 20. Իգնատիոս Աստվածազգյաց
ՀՈՒՆՎԱՐ 1. Բարսեղ Կեսարացի 3. Սեղբեստրոս պապ 18. Աթանաս և Կյուրեղ Ալեքսանդրացիներ 25. Գրիգոր Աստվածաբան
ՓԵՏՐՎԱՐ 11. Վլաս Սեբաստացի
ԱՊՐԻԼ 17. Ակակ Մելիտենեցի
ՄԱՅԻՍ 12. Գերմանոս Կոստանդնուպոլսեցի
ՀՈՒՆԻՍ 9. Կյուրեղ Ալեքսանդրացի 10. Տիմոթեոս Պրուսացի 22. Եվսեբիոս Սամոսատցի

[65] Այդ տոնացույցի հայերեն տարբերակներից մեկն է Կոզմայի «Սենաքսառը» (տե՛ս **Ղազարեան Գ.**, Կոզմա կրօնաւորի «Սենաքսառը» (1203 թ.), *Հանդէս ամսօրեայ*, 2018, թիւ 1–12, սիւն. 401–438). Բացի դրանից՝ բյուզանդական անշարժ տոնացույցի վրա են հիմնված հայկական հայսմավուրքների բոլոր խմբագրությունները:

Հայացք նետելով այս ցուցակին՝ տպավորություն է ստեղծվում, որ որմնանկարները ստեղծելիս պատվիրատուն թերթել է տոնացույցը և կամ հայսմավուրքը և գրի առել անհրաժեշտ սրբերի անունները:

գ. **Ուղղափառ հավատքի ջատագովները.** դրանք հիմնականում արիոսականության դեմ պայքարած Հայրերն են՝ Պետրոս Ալեքսանդրացին, Բարսեղ Կեսարացին, Գրիգոր Նազիանզացին, Ամփիլոքիոս Իկոնիացին, Նիկողայոս Սքանչելագործը, Եվսեբիոս Սամոսատցին, Պողոս Խոստովանողը, ինչպես նաև Գերմանոս Կոստանդնուպոլսեցին[66]: Թերևս, նույն շարքին պետք է դասել Գրիգոր Ակրագանդացուն, որը, բացի հրաշագործ սուրբ լինելուց, ըստ վարքի՝ պայքարել է միակամականների դեմ[67]:

դ. **Գրիգոր Լուսավորչի ցիկլը**. խորանում պատկերված երեք սրբեր անմիջական կապ ունեն Հայոց Լուսավորչի հետ: Այսպես, Հակոբ Մծբնա եպիսկոպոսը, ըստ հայկական վարքագրական աղբյուրների, Գրիգորի հորաքրոջ որդին է[68]: Սեղբեստրոսը «Դաշանց թղթում» հայտնի է որպես Լուսավորչի հետ ուխտ կնքած Հռոմի պապը: Բացի դրանից՝ Սեղբեստրոս պապի, Գրիգոր Լուսավորչի ու Աբերկիոս Հերապոլսեցու մասունքակիր տապանները կողք կողքի են եղել Կոստանդնուպոլսի Սբ Սոֆիա տաճարում[69]:

ե. **Փոքր Հայքի թեմատիկան**. այստեղ են ոչ միայն Փոքր Հայքի երկու նշանավոր մայրաքաղաքների՝ Սեբաստիայի ու Մելիտենեի առաջնորդները՝ Վասն ու Ակակը, այլև Կոստանդնուպոլսի երկու հայրապետները՝ Պողոս Խոստովանողն ու Ոսկեբերանը, որոնք երկուսն էլ աքսորվել են Փոքր Հայքի Կուկուս քաղաքը[70]:

զ. **«Աստծո դատաստանի» և հրաշքի թեման**[71]: Այստեղ են Սեղբեստրոս պապն ու Տիմոթեոս Պրուսացին: Առաջինի վարքում

---

[66] Գերմանոսին աքսորել են պատկերամարտները: Բայց նա անմիջական կապ ունի նաև հայ իրականության հետ, քանի որ պահպանվել է Կոստանդնուպոլսի այս հայրապետի թուղթը հայերին, որը թարգմանել ու որին պատասխանել է Ստեփանոս Սյունեցին (տե՛ս *Գիրք Թղթոց* (հրատ. Նորայր արք Պօղարեան), Երուսաղէմ, Սրբոց Յակոբեանց, 1994, էջ 414–466):

[67] **Луховицкий Л. В., Артюхова Т. А.**, *Григорий*, Православная Энциклопедия, т. 12, Москва: Церковно-научный центр «ПЭ», 2006, с. 475.

[68] **Օրմանեան Մաղաքիա**, արք. *Ազգապատում*, հ. Ա, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2001, 149–152:

[69] **Айвазян К. В.**, *История отношений Русской и Армянской Церквей в Средние века*, Ереван: Изд. АН АрмССР, 1989, с. 69.

[70] Γεδεὼν Μ. Ι., Πατριαρχικοὶ Πίνακες: Εἰδήσεις ἱστορικαὶ βιογραφικαὶ περὶ τῶν Πατριαρχῶν Κωνσταντινουπόλεως ἀπὸ Ἀνδρέου τοῦ Πρωτοκλήτου μέχρις Ἰωακεὶμ Γ' του ἀπὸ Θεσσαλονίκης, 36-1884, ἐν Κωνσταντινουπόλει, 1885-1890, σ. 120, 150–151: Փոքր Հայքի թեմատիկան ներկայացված է նաև Սեբաստիո քառասուն մանուկների նահատակության մեծադիր տեսարանով:

[71] Θεοκρισία. պայմանականորեն այսպես է կոչվում այն երևույթը, երբ վիճող կողմերը, իմանալու համար ճշմարտությունը, ապավինում են հրաշքի: «Աստծո դատաստանի» աստվածաշնչյան դասական օրինակ է եղիա մարգարեի առաջարկը Բահաղի

պատմվում է, որ Սեղբեստրոսը հավատի վերաբերյալ վեճերի մեջ էր հեթանոսների հետ: Վերջիններս պապից պահանջում են որպես ապացույց քրիստոնեության ճշմարտության՝ օգնել ազատվել այն վիշապից, որը բնակվում էր Հռոմի մերձակայքում ու վնաս հասցնում մարդկանց: Սեղբեստրոսը եռօրյա պահք է սահմանում, որից հետո նրան հայտնվում է Պետրոս առաքյալը, պատվիրում պատարագ մատուցել և ապա շղթայով փակել վիշապի որջի դուռը: Դրանից հետո վիշապը այլևս երբեք դուրս չի գալիս երկրի երես, իսկ հեթանոսները՝ հրաշքից ազդված, գալիս են պապի մոտ ու մկրտվում[72]:

Նմանատիպ մի հրաշապատում կա մյուս եպիսկոպոսի՝ Տիմոթեոս Պրուսացու վարքում: Հաշվի առնելով, որ այս հուշարձանում բացի Հուլիանոս Ուրացողի հրամանով գլխատվելուց (դա միակ դրվագն է) անկասկածելի է դառնում այն, որ Տիմոթեոսը ներառվել է Պղնձահանքի կաթողիկեի խորանի հայրապետաց շարքում հենց այդ հրաշքի պատճառով: Տիմոթեոս Պրուսացու հունարեն վկայաբանության մեջ պատմվում է, որ Պրուսայի մոտակայքում էր բնակվում մի վիշապ օձ, որը միայն իր թունավոր շնչով սպանում էր մարդկանց ու կենդանիներին: Տիմոթեոսը վիշապի վրա է գցում սուրբ հացերի ծածկոցը (τοῦ τῶν ἱερῶν ἄρτων καλύμματος), և դրանից վիշապը պատռվում ու սատկում է[73]:

Արդ, ի՞նչ կապ ունեն այս երկու հրաշքները Պղնձահանքի կաթողիկեի հետ: Կարծում ենք, որ դրանք են ընկած Իվանե Երկայնաբազուկ Զաքարյանի՝ Վրաց եկեղեցու ծոցում ուղղափառություն ընդունելու «պաշտոնական վարկածի» (արդի եզրով ասած) շարադրանքի հիմքում. դրա համաձայն՝ երբ վրացիների ու հայոց մեջ դավանական վեճ է ծագել, Քարթլիի կաթողիկոս Հովհանն առաջարկով արվել է հետևյալը. երկու կողմերը վերցրել են մեկական շուն և երեք օր շարունակ անոթի են պահել կենդանուն: Այդ ընթացքում երկու կողմերն էլ աղոթ-

քրմերին (Գ Թագ., 18, 17–40): Եկեղեցու պատմության մեջ «Աստծո դատաստանի» երկու հիշարժան օրինակ կապված են IV և VI Տիեզերաժողովների աշխատանքների հետ (տե՛ս **Γιαννόπουλος Β. Ν.**, *Οἰκουμενικές Σύνοδοι καὶ ἡ διδασκαλία τους*, Ἀθήνα, 1996, σ. 301–372):

[72] *Սոկրատայ Սքոլաստիկոսի Եկեղեցական պատմութիւն, թարգմանեաց Փիլոն Տիրակացի եւ Պատմութիւն վարուց Սրբոյն Սիղբեստրոսի եպիսկոպոսին Հռովմայ, թարգմանեալ Աբասուն Գրիգորի Զորափորեցւոյ*, հ. Բ (աշխ. Մեսրոպ վրդ Տէր-Մովսէսեան), Վաղարշապատ, տպ. Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի, 1897, էջ 704–708:

[73] *Synaxarium Ecclesiae Constantinopolitanae e codice srmondiano nunc Berolinensi Adiectis Synaxariis selectis opera et studio* **Hippolyti Delehaye**, Bruxellis, Apud Socios Bollandianos, 1902, p. 741–743: Տիմոթեոս Պրուսացու վկայաբանության հայկական խմբագրությունները, թերևս խուսափելու համար Հաղորդության հետ որևէ կապից, խոսում են պարզապես «այծենի ծածկոց»-ի մասին, որը սուրբը նետել է վիշապի մռութին (տե՛ս *Համաբարբառ Յայսմաւուրք: Նախաձերենցյան 6 խմբագրություններ. Զ-Յունիս.* աշխատ.՝ **Ս. Ապրեսյանի**, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2011, էջ 129–131: Հմմտ. **Ապրեսյան Ս.**, Թարգմանական աղավաղումներ հայոց Հայսմավուրքներում, «*Էջմիածին*», Գ, 2014, էջ 131):

քով են անցկացրել: Երեք օր անց կաթողիկոսը հայերի շան առջև է նետել վրացիների սբ Հաղորդությունը և շունը, կաղկանձելով, ետ է փախել դրանից: Երբ հայերն են իրենց նշխարը վրացիների քաղցած շան առջև նետել, կենդանին այն իսկույն կուլ է տվել[74]: Թվում է՝ Հաղորդությունը գազանին նետելու գայթակղեցուցիչ գաղափարը ծագել է հատկապես Տիմոթեոս Պրուսացու վկայաբանությունից՝ հիմք դառնալով վերը նշված բնագրի շարադրման համար[75]:

Պղնձահանքի կաթողիկեի որմնանկարների մեջ առանձնահատուկ ուշադրություն է պահանջում «Թադեոս Թեսաղոնիկեցու» կերպարը (նկ. 11): Այսպիսի անունով սուրբ հայտնի չէ: Իրականում, այստեղ գործ ունենք հայկական աղբյուրներում «Թադեոս» և «Եվստաթեոս» անունների շփոթի հետ, և մեր առջև ոչ այլ ոք է, քան Թեսաղոնիկեի անվանի արքեպիսկոպոս Եվստաթեոսը: Նա ծնվել է շուրջ 1115 թ., վախճանվել մոտ. 1195/96 թթ., այսինքն՝ Պղնձահանքի որմնանկարների ստեղծումից հաշված տարիներ 1205–1216 թթ. առաջ[76]: Այսպիսով, Պղնձահանքում մենք ունենք նրա առաջին պատկերը[77]: Զարմանալի է, թե ինչպես և ինչու է այս եպիսկոպոսն ընդգրկվել Պղնձահանքի որմնանկարների մեջ: Թերևս, կարելի է ենթադրել, որ նրա մասին տեղեկությունները Հայաստան է բերել որմնանկարների գլխավոր վարպետը, որը, ինչպես Ա. Լիդովն է կարծում, բյուզանդական հողերում կրթված հայ է եղել[78]: Եվստաթեոս Թեսաղոնիկեցին կարող էր Պղնձահանքի միաբանության համար կարևոր կերպար լինել, քանի որ այս հայրապետը, ի թիվս այլ գործերի, կշտամբել է ժամանակակից վանական կյանքում տեղ գտած խախտումները, զորօրինակ՝ վանա-

[74] ისტორიანი და აზმანი შარავანდედთანი, ქართლის ცხოვრება როინ მეტრეველის რედაქციით. საქართველოს მეცნიერებათა ეროვნული აკადემია, საქართველოს ისტორიის წყაროების კომისია, საქართველოს ისტორიკოსთა ეროვნული კომიტეტი. გამომცემლობა: "მერიდიანი", "არტანუჯი", თბილისი 2008, გ. 452–460 (վրացերեն բնագիրը թարգմանելու համար հոդվածիս հեղինակն իր երախտագիտությունն է հայտնում Վիտալի Սկրտչյանին):

[75] Ամեն դեպքում, նույնիսկ միջնադարյան մարդու համար Հաղորդությունը շան առջև գցելն այնքան անընդունելի է եղել, որ հենց վրաց մատենագիրն իր շարադրանքի մեջ Հովհան կաթողիկոսի բերանով կրկնում է, որ դա «անվայել է»: Լ. Մելիքսեթ-Բեկն էլ իրավացիորեն նկատում է, որ այս «դեպքը» նկարագրված է «առասպելական գծերով» (**Մելիքսեթ-Բեկ Լ.**, *Վրաց աղբյուրները…*, էջ 29):

[76] Աթենքի մետրոպոլիտ Միքայել Խոնիատեսը, որ վախճանվել է 1222 թ., արդեն վկայում է, որ Եվստաթեոսի գերեզմանին կատարվել են բժշկության հրաշքներ: Թեսաղոնիկեի արքեպիսկոպոսը պաշտոնապես սրբադասվել է մեր ժամանակներում՝ 1988 թ. (տե՛ս **Μέριανος Γ.**, «Ευστάθιος. 3. Αρχιεπ. Θεσσαλονίκης, *Μεγάλη Ορθόδοξη Χριστιανική Εγκυκλοπαίδεια*, τ. 7, 2012, σ. 397- 399):

[77] Եվսաթեոս Թեսաղոնիկեցու՝ մինչև օրս հայտնի հնագույն որմնանկարը թվագրված է 1312 թ. և գտնվում է Աթոս լեռան Վատոպեդիու վանքի կաթողիկեի խորհրդանոցում (նկ. 12) (տե՛ս **Буганов Р. Б., Илюшечкина Е. В., Метцлер К.**, «Евстафий», *Православная энциклопедия*, т. 17, Москва: Церковно-научный центр «ПЭ», 2008, с. 294):

[78] **Лидов А. М.**, *Росписи монастыря Ахтала…*, с. 180–194:

կանների ընչաքաղցությունը, տգիտասիրությունը, անբարո կյանքը ևն[79]: Այլ կերպ ասած՝ Եվստաթեոսը մի կերպար էր, որը խորհրդանշում էր ուղղափառության (ὀρθοδοξία) հակառակ կողմը՝ ուղղագործությունը (ὀρθοπραξία), ինչը հավասարապես կարևոր է հոգևոր կյանքի համար: Պղնձահանքի միաբանության համար կարևոր էր վանական կյանքի իդեալը, այդ իսկ պատճառով էլ Սիմեոն Պղնձահանեցին ամբողջացրել է աբբա Հովհաննես Սինայեցու «Սանդուխք» երկը՝ որպես կրոնավորների դասական ձեռնարկ:

Եվ վերջապես, նկատենք, որ «Պատասխանիք առ Հայս» երկի երրորդ հատվածում զարմանալիորեն չկա որևէ ակնարկ Վրաց եկեղեցու մասին: Ճիշտ է, այն չուներ ինքնագլուխ կարգավիճակ, այլ de jure ենթակա էր Անտիոքի պատրիարքին, սակայն վրաց թագավորության ծաղկման ժամանակ գրված երկում առավել քան սպասելի էր, որ հեղինակը խոսեր նրա մասին: Եվ, այդուհանդերձ, Պղնձահանեցին համառորեն լռում է: Պղնձահանքի կաթողիկեի խորանում, համենայն դեպս պահպանված որմնանկարներում ևս, որևէ վրացի սուրբ եպիսկոպոս չկա: Վրացական աղբյուրներից հայտնի է, որ այս ժամանակաշրջանում Արևելյան վրաց՝ Քարթլիի կաթողիկոսության նվիրապետության մեջ Մեծ Սոմխիթի մետրոպոլիտը կաթողիկոսից ու նրա դիվանապետից՝ Ճղոնդիդիի արքեպիսկոպոսից հետո զբաղեցնում էր երրորդ տեղը: Իսկ նկատի ունենալով Պղնձահանքի վանքի կաթողիկեում առկա սինթրոնը, կարելի է եզրակացնել, որ վանքը հենց այդ եպիսկոպոսի նստավայրն էր[80]: Կարելի է ուրեմն ենթադրել, որ Մեծ Հայքի մետրոպոլիտությունը, չնայած նրան, որ ենթակա է եղել Քարթլիի կաթողիկոսին, ուղղափառ հայերի գիտակցության մեջ ընկալվել է որպես առանձին մի եկեղեցական կառույց, իսկ նրա գահակալը՝ Գրիգոր Լուսավորչի անմիջական գահաժառանգ: Դրա մասին է խոսում ոչ միայն Սիմեոնի՝ Վրաց եկեղեցու մասին լռությունը, այլև Պղնձահանքի առաջնորդի հավակնոտ տիտղոսը՝ «Մեծ Հայքի».

[79] Դրան է նվիրված Եվստաթեոսի «Վերադիտումն վանական կենցաղոյ» երկը (տե՛ս **Ευσταθίου Θεσσαλονίκης**, *«Τί φλυαρεί ο μέγας παπάς;». Επίσκεψις βίου μοναχικού*. Εισαγωγή κειμένου, νεοελληνική απόδοση, σχόλια, Φ. Καλαϊτζάκης, Δρ Φιλοσοφίας, Αθήνα, εκδ. Σαββάλας, 2003): Նույն անգոսնելի երևույթների համար վանականներին խրատում էր նաև Եվստաթեոսի մեծանուն ժամանակակիցը՝ հայոց Շնորհալի հայրապետը (տե՛ս **Ներսէս Շնորհալի**, *Թուղթ ընդհանրական*, էջ 57–75: Հմմտ. **Աբեղեան Մ.,** *Հայոց հին գրականութեան պատմութիւն, գիրք Բ, ԺԱ.–ԺԹ. դարի 30-ական թուական*, Անթիլիաս-Լիբանան, 2004, էջ 123–128): Ինչ վերաբերում է Եվստաթեոսի և հայերի կապին, ապա նա խիստ բացասական է վերաբերում Թեսաղոնիկեի հայերին, որոնք, ըստ քաղաքի արքեպիսկոպոսի, համագործակցել են 1185 թ. քաղաքը գրաված Սիցիլիայի նորմանների հետ, արհեստականորեն բարձրացրել են հացի գինը ևն (տե՛ս **Բարթիկյան Հ.**, «Բյուզանդիա», *Հայ գաղթաշխարհի պատմություն (Միջնադարից մինչև 1920 թ.), հ, Բ, Ասիայի և Աֆրիկայի հայկական գաղութները* (խմբ.՝ Վ. Միքայելյան), Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2003, էջ 48–49):

[80] **Ղազարյան Գ.**, *Ուղղափառ Հայք,* Երևան–Աթենք, Հեղինակային հրատ., 2024, էջ 131–132:

հենց այդպես՝ «Մեծ Հայքի եպիսկոպոս» է կոչվում Գրիգոր Լուսավորիչը բյուզանդական աղբյուրներում ու հուշարձաններում, բայց նաև Պոնձահանքի կաթողիկեի որմնանկարում (նկ. 13):

Եզրակացություն

Այսպիսով, կարելի է փաստել, որ «Պատասխանիք առ Հայս» երկի երրորդ հատվածում Սիմեոն Պոնձահանեցին բացառապես ինքնուրույն աստվածաբան է: Նա ստեղծագործաբար օգտագործել ու սինթեզել է բյուզանդական հեղինակներին, մասնավորապես, Դիոնիսիոս Արիսպագացուն (Պետրոս Թափիչին), Մաքսիմոս Խոստովանողին, Նիկետաս Ստիթատոսին և հայկական աղբյուրները: Պոնձահանեցու եկեղեցաբանությունը հիմնված է պենտարխիայի վարդապետության վրա, սակայն հայ հեղինակն իր ուղղումներն է ներմուծել այդ համակարգի մեջ՝ օրվա եկեղեցա-քաղաքական իրողություններից ելնելով: Սիմեոնի քննադատական մոտեցումները՝ կապված Հայ առաքելական եկեղեցում տեղ գտած ինչ-ինչ կանոնական խախտումների հետ, ինչպիսիք էին հոգեհանգստյան դռնփակ պատարագը, ծիսական զգեստների բացակայությունը ևն, համահունչ են Ներսես Շնորհալի հայրապետի ու Ներսես Լամբրոնացու կարծիքին: Պոնձահանեցին յուրովի է վերհանել ու մեկնաբանել Գրիգոր Լուսավորչի կերպարը՝ նրան համարելով Հայոց եկեղեցու միության մարմնավորումը Տիեզերական եկեղեցու հետ: Սիմեոնի եկեղեցաբանական հայացքները հետաքրքրական է համեմատել Պոնձահանքի Սբ Աստվածածին վանքի կաթողիկեի խորանի որմնանկարների շարքի հետ, որոնց ընտրության մեջ էական դեր է խաղացել կաթողիկեի կտիտոր Իվանե Երկայնաբազուկ Զաքարյանի կամքը: Սիմեոն Պոնձահանեցու եկեղեցաբանութունը կարևոր բանալի է՝ Զաքարյանների շրջանի ուղղափառ հայոց եկեղեցական ճարտարապետության առանձնահատկությունները՝ սինթրոնը, սարկավագանոցը, երախանոց-գավիթը հասկանալու համար: Չնայած սուր հակաճառական բնույթին, որն արտահայտում է իր ժամանակի ու շրջապատի ոգին, Սիմեոն Պոնձահանեցու՝ Եկեղեցու հոգևոր, միստիկ էությանն ու նյութական կառույցի մասին խորհրդածությունները միջնադարյան հայ աստվածաբանության բացառիկ արժեքավոր էջերից են:

ЭККЛЕСИОЛОГИЯ СИМЕОНА ПГИНДЗАХАНКСКОГО

ГЕВОРГ КАЗАРЯН
доктор богословия
Афинский национальный университет

Аннотация

Статья посвящена экклесиологическим воззрениям армянского переводчика XIII века иеромонаха Пгиндзаханкского (Ахтальского) монастыря Симеона. Во-первых, аргументируется, что перу Симеона принадлежит третья, самостоятельная часть переведенного полемического трактата «Ответы армянам». Далее, содержащиеся в нем экклесиологические воззрения автора подвергаются источниковедческому и богословскому анализу. Симеон Пгиндзаханкский предстает перед нами как умелый богослов, творчески использовавший и синтезировавший таких византийских авторов, как Дионисий Ареопагит (Петр Кнафей), Максим Исповедник, Никита Стифат, и армянские источники. Экклесиология Симеона основана на доктрине пентархии, однако армянский автор внес свои коррективы в данный принцип, исходя из современных ему церковно-политических реалий. Критическое отношение пгиндзаханкского монаха к каноническим нарушениям, нашедшим место в Армянской Апостольской Церкви (частные литургии за упокой при закрытых дверях, отсутствие облачений), созвучно с позицией Католикоса Нерсеса Благодатного и архиепископа Нерсеса Ламбронского (XII в.). Примечателен подход Симеона к фигуре св. Григория Просветителя, которого он рассматривает как олицетворение единства Армянской Церкви с Вселенской. Экклесиологические воззрения Симеона интересно рассматривать на примере росписи алтаря кафоликона Пгиндзаханкской обители, где решающей была воля его ктитора – Иване Захаряна-Долгорукого. Экклесиология Симеона является важным ключом для понимания особенностей церковного зодчества православных армян периода Захарянов – синтрона (сопрестолия), диаконника и внешнего притвора оглашенных. Несмотря на острый полемический тон, отражающий дух своего времени, размышления Симеона Пгиндзаханкского о мистической сути Церкви и ее внешнего строения принадлежат к исключительно ценным страницам средневекового армянского Богословия.

Ключевые слова: Симеон Пгиндзаханкский, Иване Захарян-Долгорукий, экклесиология, Пгиндзаханк, Ахтала, роспись, Григорий Просветитель, православные армяне, Дионисий Ареопагит, Максим Исповедник, Евстафий Фессалоникийский

THE ECCLESIOLOGY OF SYMEON OF PEGHENDZAHANK

GEVORG KAZARIAN
Doctor of Theology
National University of Athens

Abstract

The article discusses the ecclesiological views of the 13th–century Armenian translator and hieromonk Symeon of Peghendzahank (Akhtala) Monastery. Firstly, it is argued that the third, independent part of the translated polemical treatise "Answers to the Armenians" belongs to Symeon. Then, the author's ecclesiological views contained in it are subjected to a source and theological analysis. Symeon of Peghendzahank appears as a skillful theologian who creatively used and synthesized Armenian sources and Byzantine authors such as Dionysius the Areopagite (Peter Knapheus), Maximus the Confessor and Niketas Stethatos. Simeon's ecclesiology is based on the doctrine of Pentarchy, but the Armenian author made his adjustments to this principle taking into account the ecclesiastical and political realities of his time. The monk's critical attitude to the canonical violations found in the Armenian Apostolic Church (private requiem liturgies behind closed doors, lack of vestments) is in line with the position of Catholicos Nerses the *Gracious* and Archbishop Nerses of Lambron (12th century). Particularly noteworthy is Simeon's approach to the image of St. Gregory the Illuminator, whom he regards as the personification of the unity of the Armenian Church with the Universal Church. It is interesting to consider Symeon's ecclesiological views in comparison with the murals of the altar of the catholicon of Peghendzahank Monastery, where the will of its patron Ivane Zakarian–Yerkaynabazuk (in Georgian: Mkhargrdzeli) was decisive. Simeon's ecclesiology is an important key to understanding the peculiarities of the church architecture of the Orthodox Armenians of the Zakarian period, namely the syntronon, the deaconicon and the outer narthex for catechumens. Despite the sharp polemical tone reflecting the spirit of his time, Simeon's reflections on the mystical essence of the Church and its material structure form some of the exceptionally valuable pages of medieval Armenian theology.

Keywords: Symeon of Peghendzahank, Ivane Zakarian, Peghendzahank, Akhtala, murals, Gregory the Illuminator, Orthodox Armenians, Dionysius the Areopagite, Maximus the Confessor, Eustathius of Thessalonica

Գրականության ցանկ

1. **Աբեղեան Մ.,** *Հայոց հին գրականութեան պատմութիւն, գիրք Բ, ԺԱ.-ԺԹ. դարի 30-ական թուական*, Մնթիլիաս-Լիբանան, 2004:
2. **Ագաթանգեղոս**, Պատմութիւն Հայոց, *Մատենագիրք Հայոց* (Ե դ.), հ. Բ, Մնթիլիաս-Լիբանան, էջ 1289-1735:
3. **Ակինեան Ներսէս վրդ.**, *Սիմէոն Պղնձահանեցի եւ իւր թարգմանութիւնները վրացերէնէ*, Վիեննա, Մխիթ. տպ., 1951:
4. **Ակինեան Ներսէս, վրդ.,** Վկայաբանութիւն Ս. Կիպրիանոսի Կարքեդոնի եպիսկոպոսի, *Մատենագրական հետազօտութիւններ. քննութիւն եւ բնագիր*, հ. Ա, Վիեննա, Մխիթ. տպ., 1922, էջ 87-112:
5. **Ապրեսյան Մ.**, Թարգմանական աղավաղումներ հայոց Հայսմավուրքներում, «*Էջմիածին*», Գ, 2014, էջ 128-133:
6. **Բարթիկյան Հ.**, «Բյուզանդիա», *Հայ գաղթաշխարհի պատմություն (Միջնադարից մինչև 1920 թ.), հ. Բ, Ասիայի և Աֆրիկայի հայկական գաղութները* (խմբ.՝ Վ. Միքայելյան), Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2003:
7. **Բոզոյան Ա.**, Ազգային ինքնության արտացոլումը Սիմեոն Պղնձահանեցու մատենագրական ժառանգության մեջ, *Բանբեր հայագիտության*, 31, 2023, էջ 16-27:
8. *Գիրք Թղթոց* (հրատ.՝ Նորայր արք Պօղարեան), Երուսաղէմ, տպ. Սրբոց Յակոբեանց, 1994:
9. Թուխտ երանելոյն Մաշտոցի, նախ քան զկաթուղիկոսութիւն, առ տէր Գէորգ Հայոց կաթուղիկոս վասն Սիւնեաց խաչին, թէ էր աղագաւ տուաւ, *Մատենագիրք Հայոց*, Թ հատ., Թ դար (Յաւելուած), էջ 571-573:
10. Թուղթ Փոտայ պատրիարքի առ Զաքարիա կաթողիկոս Հայոց Մեծաց վասն երկու միաւորեալ բնութեանցն մի անձնաւորութիւն գոլոյ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եւ վասն ճշմարտախոհութեան ժողովոյ սուրբ Հարցն որ ի Քաղկեդոն, *Հանդէս ամսօրեայ*, թիւ 1-3 և 4-6, 1968, էջ 65-100, 129-156:
11. *Խորհրդատետր սրբազան Պատարագի ըստ արարողութեան Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ*, Երուսաղէմ, Սրբոց Յակոբեանց «Եղիվարդ» գունատիպ տպարան, 1989:
12. *Կանոնագիրք Հայոց* (աշխ.՝ Վ. Հակոբյանի), հ. Ա, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1964:
13. *Համաբարբառ Յայսմաւուրք: Նախաձերենցյան 6 խմբագրություններ. Զ-Յունիս* (աշխատ.՝ Մ. Ապրեսյանի), Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2011:
14. **Ղազարյան Գ.**, Դոնփակ պատարագը Հայ առաքելական եկեղեցու ծիսակարգում, *Բանբեր Մատենադարանի*, 33, 2022, էջ 259-284:
15. **Ղազարեան Գ.**, Կոզմա կրօնաւորի «Սենաքսաոը» (1203 թ.), *Հանդէս ամսօրեայ*, թիւ 1-12, 2018, սիւն. 401-438:
16. **Ղազարյան Գ.,** *Հայոց եկեղեցական զգեստները (պատմություն և խորհրդաբանություն), ավարտուած*, Ս. Էջմիածին, 2007 (անտիպ):
17. **Ղազարյան Գ.**, *Ուղղափառ Հայք*, Երևան-Աթենք, Հեղինակային հրատ., 2024:

18. *Մայր Ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի* (կազմ.՝ Ա. Քեօշկերեան, Կ. Սուքիասեան, Յ. Քեօսէեան, խմբ. Փ Անթաբեան, Յ. Քեօսէեան, Ա. Ղազարոսեան, Տ. Շահէ քիյ. Հայրապետեան), հ. Դ, «Նաիրի հրատ., Երևան, ԵՊՀ հրատ., 2008:
19. **Մատթեոս Ուռհայեցի**, *Ժամանակագրություն* (թարգմ., ներած. և ծանոթ.՝ Հ. Բարթիկյանի), Երևան, «Հայաստան» հրատ., 1973:
20. **Մելիքսեթ-Բեկ Լ.**, *Վրաց աղբյուրները Հայաստանի յեվ հայերի մասին, հ. Ա (Ե-ԺԲ դար)*, Ցերեվան, Գիտհրատի տպարան, 1936:
21. **Մուրադյան Պ.**, *ԺԱ-ԺԳ. դարերի հայ-վրացական դավանական խնդիրները և Մխիթար Գոշի «Առ Վրացիսն» թուղթը. աղբյուրագիտական քննություն և բնագրեր, Ս. Էջմիածին*, Մայր Աթոռ Սբ Էջմիածնի հրատ., 2011:
22. **Ներսէս Շնորհալի**, *Թուղթ ընդհանրական Ներսէսի կաթուղիկոսի Հայոց առ համարէն հայասեռ ազինս, որոց տեսչութիւն հաւատացաւ նմա ի Տեառնէ* (հրատ.՝ Ա. Բոզոյեան), *Մատենագիրք Հայոց*, ԻԲ. հատ., ԺԲ. դ., էջ 38-131:
23. **Շիրինյան Մ. Է.**, Ընդհանրական եկեղեցու առաքելական աթոռների վարդապետության ձևավորումը և զարգացումը, *Լևոն Խաչիկյան 90. Նյութեր Մատենադարանի հիմնադիր տնօրենի ծննդյան իննսունամյակին նվիրված միջազգային գիտաժողովի (9-11 հոկտեմբերի 2008 թ.)*, Երևան, «Նաիրի», 2010, էջ 90-99:
24. *Պատմութիւն նահանգին Սիսական, արարեալ Ստեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Սիւնեաց*, Թիֆլիս, 1910:
25. *Սոկրատայ Սքոլաստիկոսի Եկեղեցական պատմութիւն, թարգմանեաց Փիլոն Տիրակացի եւ Պատմութիւն վարուց Սրբոյն Սիղբեստրոսի եպիսկոպոսին Հռովմայ, թարգմանեալ Աբասուն Գրիգորի Զորափորեցւոյ*, հ. Բ, (աշխ. Մեսրոպ վրդ Տէր-Մովսէսեան), Վաղարշապատ, տպ. Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի, 1897:
26. *Սրբազան Պատարագամատոյցք Հայոց. Թարգմանութիւնք Պատարագաց Յունաց, Ասորւոց եւ Լատինացւոց հանդերձ քննութեամբք, նախագիտելեօք ու ծանօթութեամբք ի Հ.* Յովսեփայ վ. Գաթրճեան ի Մխիթ. ուխտէն, հրատ. հանդերձ յաւելուածովք ի Հ. Յակովբոսէ վ. Տաշեան, ի Մխիթ. ուխտէն, Վիեննա, Մխիթ. տպարան, 1897:
27. **Սրբոյն Ներսեսի Լամբրոնացւոյ Տարսոնի եպիսկոպոսի** *Խորհրդածութիւնք ի կարգս Եկեղեցւոյ եւ Մեկնութիւն Խորհրդոյ Պատարագին*, ի Վենետիկ, ի տպ. Սրբոյն Ղազարու, 1847:
28. **Օրմանեան Մաղաքիա, արք.** *Ազգապատում*, հ. Ա, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2001:
29. **Айвазян К. В.**, *История отношений Русской и Арлянской Церквей в Средние века*, Ереван: Изд. АН АрмССР, 1989.
30. **Бармин А. В.**, Никита Стифат, *Православная энциклопедия*, т. 49, Москва: Церковно-научный центр «ПЭ», 2018, с. 570-577.
31. **Буганов Р. Б., Илюшечкина Е. В., Метцлер К.**, Евстафий, *Православная энциклопедия*, т. 17, Москва: Церковно-научный центр «ПЭ», 2008, с. 293-298.

32. **Дионисий (Шлёнов), игум., Рапава М. А.**, Прп. Никита Стифат: Второе и третье обличительные слова против армян, *Богословский Вестник*, № 10, 2010, с. 32–124.
33. **Казарян Г.**, Послание иерусалимского патриарха Фомы и Феодора Абу Курры, отправленное в Армению, *Տայքը պատմության խաչուղիներում*, Գյումրի, ՀՀ ԳԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, 2024, էջ 53–57:
34. **Лидов А. М.**, *Росписи лионастыря Ахтала. История, иконография, лиастера,* Москва: Университет Дмитрия Пожарского, 2014.
35. **Луховицкий Л. В., Артюхова Т. А.**, Григорий, *Православная Энциклопедия,* т. 12, Москва: Церковно-научный центр «ПЭ», 2006, с. 474–477.
36. **Мурадян П. М.**, Кавказский культурный мир и культ Григория Просветителя, *Կովկասեան մշակութային աշխարհը եւ Հայաստանը*, պրակ Բ, Երևան, ՀՀ ԳԱԱ «գիտություն» հրատ., 2012, էջ 5–20:
37. **Дионисий (Шленов), иеродиакон**, *Преподобный Никита Стифат и его богословские сочинения.* Диссертация на соискание ученой степени кандидата богословия, Сергиев Посад, 1998 (в рукописи).
38. **Dorfmann-Lazarev I.**, The Apostolic Foundation Stone: the Conception of Orthodoxy in the Controversy between Photius of Constantinople and Isaac Surnamed Mŕut (882), *Byzantine Orthodoxies* (Papers from the Thirty-sixth Spring Symposium of Byzantine Studies, University of Durham, 23-25 March 2002 (ed. A. Louth, A Casiday), Ashgate, 2006, p. 179–198.
39. Les Constitutions Apostoliques, t. III, Livres VII et VIII, introduction, texte critique, traduction et notes par M. Metzger, *Sources Chrétiennes*, 336, 2008.
40. **Maximi Confessoris** Mystagogia una cum Latina interpretatione Anastasii Bibliothecarii, edita a Christian Boudignon, *Corpus Christianorum Series Graeca*, 69, Turnhout: Brepols Publ., 2011.
41. *Synaxarium Ecclesiae Constantinopolitanae e codice srmondiano nunc Berolinensi Adiectis Synaxariis selectis opera et studio* Hippolyti Delehaye, Bruxellis, Apud Socios Bollandianos, 1902.
42. **Ευσταθίου Θεσσαλονίκης**, *«Τί φλυαρεί ο μέγας παπάς;». Επίσκεψις βίου μοναχικού*. Εισαγωγή κειμένου, νεοελληνική απόδοση, σχόλια, Φ. Καλαϊτζάκης, Δρ Φιλοσοφίας, Αθήνα, εκδ. Σαββάλας, 2003.
43. **Φειδάς Β. Ι.,** *Πέτρος ο Κναφεύς. Ο Διονύσιος των Αρεοπαγιτικών έργων*, Αθήνα, Αποστολική Διακονία της Εκκλησίας της Ελλάδος, 2022.
44. **Γεδεὼν Μ. Ι**., *Πατριαρχικοὶ Πίνακες: Εἰδήσεις ἱστορικαὶ βιογραφικαὶ περὶ τῶν Πατριαρχῶν Κωνσταντινουπόλεως ἀπὸ Ἀνδρέου τοῦ Πρωτοκλήτου μέχρις Ἰωακεὶμ Γ' του ἀπὸ Θεσσαλονίκης, 36-1884*, ἐν Κωνσταντινουπόλει, 1885-1890.
45. **Γιαννόπουλος Β. Ν**., *Οἰκουμενικές Σύνοδοι καὶ ἡ διδασκαλία τους*, Ἀθήνα, 1996.
46. **Ματσούκας Ν**., *Κόσμος, ἄνθρωπος καὶ κοινωνία κατὰ τὸν Μάξιμο Ὁμολογητὴ*, Ἀθήνα, ἐκδ. Γρηγόρη, 2014.

47. **Μέριανος Γ**., «Ευστάθιος. 3. Αρχιεπ. Θεσσαλονίκης, *Μεγάλη Ορθόδοξη Χριστιανική Εγκυκλοπαίδεια*, τ. 7, 2012, σ. 397- 399.
48. ისტორიანი და აზმანი შარავანდედთანი, ქართლის ცხოვრება როინ მეტრეველის რედაქციით. საქართველოს მეცნიერებათა ეროვნული აკადემია, საქართველოს ისტორიის წყაროების კომისია, საქართველოს ისტორიკოსთა ეროვნული კომიტეტი. გამომცემლობა: «მერიდიანი», «არტანუჯი», თბილისი 2008.

Նկարների ցանկ

1. Պղնձահանքի կաթողիկեի խորանը և եռաստիճան սինթրոնը, լուս.՝ Վահագն Ամիրյանի, © ՀՃՈՒՀ արխիվ
2. Պղնձահանքի կաթողիկեն հյուսիս-արևելքից. արևելքից՝ արտաքին գավիթ-երախանոցը, © ՀՃՈՒՀ արխիվ
3. Խուճապի վանքի կաթողիկեի արտաքին գավիթ-երախանոցը, լուս.՝ Սևակ Արևշատյանի
4. Սեղվու վանքը. հարավից՝ երախանոցը, լուս.՝ Ռաֆֆի Քորթոշյանի, 2012 թ., © ՀՃՈՒՀ արխիվ
5. Թեժառույքի վանքի հատակագիծը. արևելքից՝ երախանոցը, ըստ՝ Հակոբյան Ջ. և այլք., *Հայաստանի 12-14-րդ դդ. խոնարհված և քիչ ուսումնասիրված եկեղեցական կառույցների քանդակային հարդարանքը,* Երևան, ԵՊՀ հրատ., 2023, էջ 189, նկ. 1)
6. Անիի Սբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին՝ արևելքից կցակառուցված երախանոցով: Եռաչափ վերակազմությունը՝ Աշոտ Հակոբյանի և Պարգև Ֆրանկյանի, 2015 թ.,© ՀՃՈՒՀ
7. Ալեքսանդրիայի պատրիարք Հովհան Ողորմածը: Որմնանկար, Պղնձահանքի կաթողիկե, լուս.՝ Սամվել Կարապետյանի, 2012 թ., © ՀՃՈՒՀ արխիվ
8. Նիկողայոս Աքանչելագործ (՞), Իգնատիս Աստվածազգյաց և Աթանաս Ալեքսանդրացի (՞): Որմնանկար, Պղնձահանքի կաթողիկե, լուս.՝ Ռաֆֆի Քորթոշյանի, 2012 թ., © ՀՃՈՒՀ արխիվ
9. Նիկողայոս Աքանչելագործը (հատված): Որմնանկար, Պղնձահանքի կաթողիկե, © ՀՃՈՒՀ արխիվ
10. Նիկողայոս Աքանչելագործը (հատված): Որմնանկար, Դաղիվանքի կաթողիկե, լուս.՝ Սասուն Դանիելյանի, 2015 թ., © ՀՃՈՒՀ արխիվ
11. Եվստաթեոս Թեսաղոնիկեցին: Որմնանկար, Պղնձահանքի կաթողիկե, լուս.՝ Ռաֆֆի Քորթոշյանի, 2012 թ., © ՀՃՈՒՀ արխիվ
12. Եվստաթեոս Թեսաղոնիկեցին: Որմնանկար, Աթոսի Վատոպեդիու վանք, 1312 թ., ըստ՝ Буганов Р. и др., Евстафий, *ПЭ,* т. 17, с. 293
13. Գրիգոր Լուսավորիչը: Որմնանկար, Պղնձահանքի կաթողիկե, լուս.՝ Սամվել Կարապետյանի, 2012 թ.,© ՀՃՈՒՀ արխիվ

Ընդունվել է՝ 22.04.2025
Գրախոսվել է՝ 28.05.2025
Հանձնվել է գպ.՝ 11.09.2025

1



2

3

4



5

6

7

8

9

10

11

12

13